

Խմբագիրներ՝ Հարություն Ալեքսանյան, Ելեն Գոլդբերգ MPA
Editors Dr. Harutyun Aleksanyan, Ellen Goldberg, MPA

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Միջազգային կազմակերպություններ և
Օրենսդրական Հիմնական Ակտեր*

Integrity Glossary

International Organisations and Key Legislation



Published by Integrity Action

ՀՏԴ 341(038)
ԳՄԴ 67.412գ2
Բ 346

Խմբագիրներ՝ Հարություն Ալեքսանյան, Ելեն Գոլդբերգ MPA
Editors Dr.Harutyun Aleksanyan. Ellen Goldberg, MPA

Թարգմանիչ՝ Նարինե Ալեքսանյան

Բ 346 ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ: Միջազգային կազմակերպություններ և Միջազգային Հիմնական Ակտեր.- Եր.: Էդիթ Պրինտ, 2016.- 128 էջ:

ՀՏԴ 341(038)
ԳՄԴ 67.412գ2

ISBN 978-9939-75-026-2

© Integrity Action, 2016

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ	6
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	87
ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԿՏԵՐ	102

Նախարան

Ես պատիվ ունեմ ներկայացնել Բարեվարքության վերաբերյալ եզրույթների այս բառարանը, որը պատրաստվել է Ինթեգրիթի Էքժն կազմակերպության կողմից: Ինթեգրիթի Էքժն կազմակերպությունը ավելի քան տաս տարի բարեվարքության վերաբերյալ թեմատիկ դասավանդումներ է իրականացրել տարբեր համատեքստերում և տարբեր լսարանների համար, ինչպիսիք են բարձրաստիճան պետական պաշտոնյաները, դասախոսները, ինչպես նաև դպրոցականները: Վերջին մի քանի տարիների ընթացքում վերապատրաստման դասընթացների ժամանակ բազմիցս բարձրացվել են բարեվարքության եզրույթների և սահմանումների բացատրման հետ կապված հարցեր: Այս բառարանի նպատակն է բավարարել այդ պահանջը:

Սույն բառարանը նախատեսված է ուսանողների ու դասախոսների համար, այն նպատակ ունի օգնել դասախոսներին և մասնագիտական վերապատրաստման դասընթացներ վարողներին, ովքեր ուսանողներին և հանրային պաշտոնյաներին դասավանդում են բարեվարքության կարևորության ու պրակտիկայի հետ կապված թեմաներ:

Ես ցանկանում եմ հատուկ շնորհակալությունս և երախտագիտությունս հայտնել այս բառարանի ստեղծման մեջ ներդրում կատարած անձանց, ներառյալ Ռիչարդ Հոլըվեյին, ով մշակել է հիմնական նյութը, Մաջդ Գովանիին ցուցաբերած վարչական աջակցության համար, ինչպես նաև Էլլեն Գոլդբերգին, իր տեսլականի և այս ծրագիրն իր ավարտին հասցնելու համառության համար: Որոշակի

ներդրում են կատարել նաև Բարեվարքության կրթական ցանցի մեր անձնակազմը և անդամները, ովքեր ներկայացրել են եզրույթների տեղական ընկալումը և լավագույնս ամփոփել իրենց պետություններում բարեվարքության կառուցման պրակտիկան:

Ես կցանկանայի հարգանքի տուրք մատուցել Բարեվարքության կրթական ցանցի մեր գործընկերներին, ովքեր մեզ հետ կիսել են այս տասը տարիները, օգնել են մեզ պատրաստել սույն բառարանը և կիրառել մեր գաղափարները: Մենք իսկապես շնորհակալ ենք Ձեր խանդավառության և այն ազդեցության համար, որ Դուք ունեցել եք աշխարհի առավել մարտահրավերային միջավայրերից մի քանիսում բարեվարքության կառուցման գործում:

***Ջոյ Սաունդերս
Գլխավոր գործադիր տնօրեն,
2015 թ. նոյեմբեր***

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ակտիվիստ	Անձ, ով լրջորեն և խանդավառությամբ ձեռնամուխ է լինում տվյալ առաջադրանքի կատարմանը և/կամ լուսաբանմանը՝ որոշակի (հաճախ սոցիալական կամ քաղաքական) պատճառներով, աջակցելով խնդիրների լուծմանը, մասնակցելով զանգվածային միջոցառումներին, հանրային պաշտոն զբաղեցնելու համար իր թեկնածությունը առաջադրելիս և այլն:
Ամբոխավարություն	Ամբոխի կամ մարդկանց զանգվածի կողմից իրականացվող կառավարում կամ սահմանադրական մարմինների սահաբեկում:
ԱՄՊ-ուղեցույց հանցագործության մասին հայտնելու վերաբերյալ	Առևտրի միջազգային պալատի կողմից մշակված ուղեցույց հակակոռուպցիոն գործունեության մասին, որի նպատակն է աջակցել ընկերություններին հանցագործության մասին հայտնելու հետ կապված համակարգի ստեղծման հարցում:
Անբարյացակամ վերաբերմունք	Որոշակի լիազորություններ ունեցող անձի կողմից ոչ պատշաճ արձագանք, ով չի գործում իր պարտականությունների պահանջներին համապատասխան:
Անկախ աուդիտոր	Չշահագրգռված երրորդ կողմ հանդիսացող հաշվապահական կազմակերպություն, որը ստուգում է կազմակեր-

	պության ֆինանսական փաստաթղթերը: Այս առումով արդյունավետ է հաշվապահական կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող կազմակերպության համար այլ ծառայություններ չնատուցելու պրակտիկան:
Անկախ կարգավորող	Կիսահինքնավար մարմիններ, որոնք սովորաբար հիմնադրվում են օրենքի հիման վրա, ունեն հստակ սահմանված, առանձին իրավական հիմք, որը սահմանում է դրանց նպատակներն ու գործառույթները: Այդ մարմինները չպետք է ենթարկվեն արտաքին քաղաքական կամ այլ բնույթի ճնշումների:
Անկեղծություն	Ճշմարտություն ասելու հատկություն:
Անկյունագծային հաշվետվողականություն	Բարեվարքության ազգային համակարգում անկյունագծային հաշվետվողականությունը կիրառվում է ուղղահայաց և հորիզոնական տարածությունների միջև: Այն կապված է հորիզոնական հաշվետվողականությամբ հաստատությունների առումով քաղաքացիների ուղղակի ներգրավման հետ (օրինակ՝ քաղաքացին կարող է կապ հաստատել օմբուդսմենի հետ, ով այնուհետև հորիզոնական ձևով բանակցում է մեկ այլ կարևոր ներկայացուցչի հետ), նպատակ ունենալով ավելի արդյունավետ վերահսկել պետական գործառույթների իրականացումը: Քաղաքացիները շրջանցում են դժվարանցանելի կամ բարդ պայմանականություններով լեցուն հաշվետ-

	վողականության համակարգը, որպես- զի կարողանան գրադվել քաղաքակա- նությամբ, կազմել բյուջե, վերահսկել ծախսերը և իրականացնել այլ գործու- նեություն: Անկյունագծային հաշվետվո- ղականությունը եղել է բազմաթիվ նո- րարարությունների կիզակետում հատ- կապես վերջին 20 տարիների ընթաց- քում:
Անկողմնակալ	Արդարացի, ձիշտ, առանց կողմնակա- լության:
Անհարգալից վերաբերմունք	Հարգանքի կամ քաղաքավարություն բացակայություն:
Անհարկի ճնշում	Համոզելու կամ չափից ավելի ահա- բեկելու փորձ:
Անհերքելի ապացույց	Անվիճելի փաստեր, որոնց հավաստիու- թյունը չի կարող կասկածի տակ դրվել:
Անհիմն օգուտ ստացող աշ- խատակիցներ	Աշխատանքային խմբում ներառված ան- ձինք, որոնք օգուտ են քաղում այլ ան- ձանց կողմից կատարված աշխատանքի արդյունքներից:
Աշխատանքը թողնելը	Երբ աշխատանքից ազատվում են՝ աշ- խատավայրում առկա կոռուպցիան հանդուրժելու ցանկության բացակայու- թյան պատճառով:
Ապաքաղաքա- կան	Քաղաքականությամբ չհետաքրքրվող և ընտրություններին կամ այլ քաղաքա- կան գործընթացներին չմասնակցող և քաղաքական կուսակցություններին չանդամակցող:
Ապակենտրո- նացում	Ապակենտրոնացումը, ընդհանուր առ- մամբ, մի գործընթաց է, որի միջոցով

	<p>լիազորությունները, գործառույթները, պարտականությունները և ռեսուրսները փոխանցվում են կառավարման կենտրոնական մարմիններից տեղական մարմիններին և/կամ այլ ապակենտրոնացված հաստատություններին: Կիրառական առումով ապակենտրոնացումը տեղերի հավակնությունների և կենտրոնի պահանջների միջև հավասարակշռության պահպանման գործընթաց է: Ճիշտ կառուցվածքային լուծումների դեպքում ապակենտրոնացումը կարող է հանգեցնել խնդրահարույց հարցերի (ազգային միասնություն և անբաժանելիություն, համակարգվածության և զարգացման ապահովման միջոցով ազգային շահերի երաշխավորում, հավասարություն ռեսուրսների բաշխման հարցում, բազմազանություն և տեղական ինքնավարություն) լուծմանը:</p>
<p>Ապացույցների բազա</p>	<p>Համայնքում բարեվարքության կառուցման գործընթացի երրորդ փուլը, որին հատուկ են փաստերի հավաքագրումը, վերլուծությունը և ստուգումը:</p>
<p>Ապօրինի</p>	<p>Օրենքին հակառակ:</p>
<p>Ապօրինի եկամուտ</p>	<p>Ապօրինի կերպով ստացված եկամուտ, ինչպես նաև ապօրինի կերպով ստեղծված ֆոնդեր:</p>
<p>Աջակիցներ</p>	<p>Մարդկանց կամ կազմակերպությունների խումբ, ովքեր հանդիսանում են շահագրգիռ կողմեր կամ ծառայություններ մատուցող հանրային մարմիններ,</p>

	որոնք բաղկացած են պոստնցիալ ա- ջակիցներից:
Առաջնորդու- թյուն	Այս եզրույթը նշանակում է անձանց անհատական հատկանիշների և վար- քագծի համակցություն, ովքեր առաջ- նորդում են այլ անձանց, օգտագոր- ծելով պաշտոնական և ոչ պաշտո- նական լիազորությունը կամ անձնական ազդեցությունը:
Առաքելության մասին հայտարար- ություն	Համառոտ, պաշտոնական հայտարար- ություն, որում արտացոլված են կազ- մակերպության նպատակը, խնդիրները և արժեքները:
Առաքելություն	Առաքելությունը կազմակերպության գոր- ծունեության և գոյության պատճառների նկարագիրն է: Առաքելության նկարա- գիրը պետք է մատչելի ձևով շարադրի կազմակերպության նպատակը:
«Ատկատ»	Նախապես համաձայնեցված գումար, որը տրվում է պետական պաշտոնյա- յին, ով կաշառք է վերցրել ծառայության մատուցման դիմաց, ստանալով իր պաշտոնական պարտականությունների և այլ անձանց իրավունքների հետ ան- համատեղելի առավելություն: «Ատ- կատ» բառը ժարգոնային բառ է, որը նշանակում է ֆինանսների «վերադարձ» կաշառված պաշտոնյային:
Արարողակարգ	Ավանդույթներ և կանոններ, որոնք կարգավորում են գործունեության իրա- կանացման պաշտոնական կողմը:
Արդարացնել	Ցույց տալ ողջամիտ կամ ձշմարիտ լի-

	նելը՝ հիմնավորում կամ ապացույց ներկայացնելու միջոցով:
Արդյունահանող արդյունաբերությունների թափանցիկության նախաձեռնություն (ԱԱԹՆ)	Բիզնես կազմակերպությունների, կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միավորում, որի նպատակն է նպաստել թափանցիկությանը ԱԱԹՆ –ի կողմից ընդունված ընդհանուր չափանիշի կիրառման միջոցով: Այդ չափանիշը պահանջում է մասնակից կազմակերպություններից հրապարակել բոլոր ծախսերը, որոնք նրանք կատարում են տվյալ երկրում իրենց բիզնես գործունեությունն իրականացնելու ընթացքում, ինչը այնուհետև կցվում է համապատասխան կառավարությունների կողմից ստացված վճարների մասին նրանց հաշվետվություններին: Ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ԱԱԹՆ –ի զեկույցում, իսկ երկու տարին մեկ անգամ անցկացվում է ԱԱԹՆ –ի կոնֆերանսը:
Արդյունավետության գնահատում	Կազմակերպության կատարողականի կամ գործողությունների գնահատումը նույն ոլոտում սահմանված լավագույն չափանիշների կամ լավագույն պրակտիկայի հիման վրա:
Արդյունք	Որոշակի հետևանք առաջացնող փաստացի գործունեություն:
Արժանիքի սկզբունք	Տեսակետ, որի համաձայն կառավարության աշխատակիցների ընտրությունը պետք է կատարվի հաշվի առնելով նրանց արժանիքները կամ իրավասու-

	թյունը, այլ ոչ անձնական կամ քաղաքական հովանավորությունը:
Արժանահավատություն	Հավատի արժանի լինելը: Այլ անձանց մոտ վստահության արժանանալու միջոցներ, որոնք հիմնված են կատարողականի և վարքագծի վրա:
Արժեքավոր առաջարկ	Արժեքավոր առաջարկը գործիք է, որն օգտագործվում է այլ մրցակից կազմակերպությունների համեմատությամբ ձեր կազմակերպության՝ իր բաժնետերերի ռեսուրսների վերաբերյալ պահանջի առավել ընդունելի լինելու հանգամանքը ներկայացնելու համար: Այն պետք է հստակորեն ներկայացնի այն նյութական և ոչ նյութական արդյունքները, որոնք բաժնետերը կարող է ակնկալել, և այն գործոնները, որոնք ձեր կազմակերպությունը մյուսների համեմատ դարձնում են ավելի գրավիչ ռեսուրսներ ստացող կազմակերպություն:
Արժեքներ	Արժեքները հանդիսանում են դրական, շահագրգռող դրդապատճառ կազմակերպության գործունեության համար և ծառայում են որպես ուղեցույց կազմակերպությունների գործողությունների առաջնահերթությունները սահմանելու համար: Դրանք պետք է ոգեշնչեն և ուղղորդեն անհատական վարքագիծը կազմակերպության ներսում: Նրանք պետք է ամրապնդեն Ձեր կազմակերպության ռազմավարության նպատակը և ուղղությունը:

<p>Արհեստավարժություն</p>	<p>Բարեվարքության հիմնական տարերից մեկն է: Արհեստավարժությունը նշանակում է, որ կազմակերպությունը ունակ է իրականացնել կատարման ենթակա նպատակները և արդարացնել իր արտաքին ու ներքին շահառուների սպասելիքները: Սա նշանակում է, որ կազմակերպության աշխատակիցների միջև արդյունավետ կերպով բաշխված են հմտությունները ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են իրենց պարտականությունների կատարման և կազմակերպության նպատակներին հասնելու համար: Այն ապահովում է հուսալի գործելակերպ, նպաստելով կազմակերպության գործունեության և մասնակիցների կարիքների ներդաշնակեցմանը: Որպես այդպիսին, այն ցույց է տալիս, որ կազմակերպությունը «ծառայում է իր նպատակին» իր գործունեության միջավայրում: Արհեստավարժությունը պահանջում է կառավարման և տեխնիկական հմտությունների ու որակների հավասակշռված համադրություն:</p>
<p>Արձագանքելու կարողություն</p>	<p>Մարդկանց և նրանց կարիքներին իրավասու կերպով, կարեկցանքով, քաղաքավարությամբ և օպերատիվ արձագանքելը: Այն հանդիսանում է հաշվետվողականության և համապատասխանության հիմնական բնութագրիչը, հատկապես հանրային պաշտոնյաների համար, ովքեր քաղաքացիներին ծառայու-</p>

	թյուններ են մատուցում:
Արտոնագրում	Պայմանագրի տեսակ, որի շրջանակներում կառավարությունն արտոնագիր է տալիս մասնավոր կազմակերպությանը ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման համար, ինչն այլ կերպ թույլատրելի չէ պետական ոլորտից դուրս:
Արտոնություն	Հովանավորչական, գերակա կամ արհամարհական վերաբերմունք:
Աուդիտ	Կազմակերպության կամ անհատի ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և ֆինանսական ընդհանուր կարգավիճակի անկողմնակալ ստուգում, գնահատում և հաստատում:
Բազմակարծություն	Սոցիալական և քաղաքական հայեցակարգ, որը շեշտադրում է համապատասխան խմբի կազմակերպվածություն, որը ներառում է խմբերի և նրանց գործունեության բազմազանությունը, հանդիսանում է հասարակության լայն խմբի շահերի պաշտպանության միջոց, ենթադրում է, որ այդ խմբերը լավն են, ու նրանց բազամազանությունը ծառայում է հասարակության շահերին:
Բազմակողմ նախաձեռնություններ	Նախաձեռնություններ, որոնցում կառավարությունը, բիզնես կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը և շահագրգիռ այլ խմբեր միավորվում են հանրային ծրագրերի կամ ծառայություններ մատուցման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

	<p>նացնելու համար, նպատակ ունենալով ապահովել ֆինանսների նպատակային օգտագործումը՝ պայմանագրի և ծրագրի այլ փաստաթղթերի համաձայն:</p>
<p>Բարեվարքության ազգային համակարգ</p>	<p>Բարեվարքության ազգային համակարգը Ջերեմի Փոփի կողմից առաջարկված հասկացություն է, այն հասարակության և պետության ինստիտուցիոնալ համակարգի և մեխանիզմների համակցություն է, որոնք միավորվելով նպաստում են կայուն զարգացմանը, իրավունքի գերակայությանը և կյանքի որակի բարելավմանը՝ բարեվարքության ամրապնդման միջոցով: Այն հիմնված է քաղաքացիների հուսալի ներուժի վրա, որոնք իրենց սոցիալական արժեքների և իրազեկվածության շնորհիվ պահպանում են հանրային սեկտորի բոլոր տարրերը կամ «սյուները», ընդգրկելով որոշ մասնավոր և նույնիսկ միջազգային դերակատարներ, որոնք ազդում են պետության հանրային սեկտորի վրա: Այս «սյուները» պահում են Ազգային բարեվարքության համակարգը: Սակայն, եթե «սյուները» թույլ են և չեն գործում, ապա նրանք չեն կարող ապահովել Ազգային բարեվարքության համակարգի արդյունավետությունը, հետևաբար հասարակության առջև դրված նպատակները վտանգվում են:</p>
<p>Բարեվարքության</p>	<p>Այն հանդիսանում է պարտականությունների կատարման արդյունքում</p>

<p>բացթողում</p>	<p>ակնկալվող և փաստացի չափանիշների միջև առկա տարբերությունը: Բարեվարքության բացերը առաջանում են այն դեպքում, երբ կազմակերպությունը կամ անհատը թերանում է ցուցաբերել արժանահավատություն, որն անհրաժեշտ է շահառուների մոտ վստահություն ձեռք բերելու համար: Բարեվարքության բացթողումների հայտնաբերումը կարևոր քայլ է դրանց նվազեցմանն ուղղված լուծումների մշակման համար:</p>
<p>Բարեվարքության հատկանիշներ</p>	<p>Այն հատկանիշները, որոնք շահառուների համար ապահովում են արժանահավատության, հետևաբար նաև՝ բարեվարքության բարձր ցուցանիշ: Ըստ Ինթեգրիթի Էքշն կազմակերպության սահմանման՝ բարեվարքությունը հիմնված է հաշվետվողականության, արհեստավարժության և էթիկայի գույակցման վրա, որը բացառում է կոռուպցիան: Այս չորս գործոնները հանդիսանում են բարեվարքության նույնականացման և/կամ չափման ենթակա հատկանիշներ:</p>
<p>Բարեվարքության հարցերով աշխատակից</p>	<p>Կազմակերպության հատուկ վերապատրաստում անցած աշխատակից, ով պարտավոր է աջակցել կազմակերպության այլ աշխատակիցներին՝ աշխատավայրում առաջացած բարեվարքության և էթիկայի հետ կապված խնդիրների լուծման հարցում, պահպա-</p>

	<p>նելով գաղտնիությունը: Ի տարբերություն համապատասխանության հարցերով աշխատակցի, բարեվարքության հարցերով աշխատակիցը կենտրոնանում է աշխատակցի կողմից խնդրի լուծում գտնելու հարցում նրան աջակցության ցուցաբերման, այլ ոչ թե այդ խնդիրների մասին զեկուցելու կամ դրանց հետ կապված վարույթների վրա: Իհարկե, լուրջ հարցերի դեպքում աշխատակիցը զեկուցում է դրանց մասին, եթե առկա է անհրաժեշտություն:</p>
<p>Բարեվարքության հարցերով աշխատանքային խումբ</p>	<p>Կազմակերպության ներսում տարաբնույթ գործառույթներ իրականացնող մարդկանց խումբ, որն աջակցում է բարեվարքության հարցերով ղեկավարին կազմակերպության մեջ բարեվարքության ամրապնդման գործընթացում:</p>
<p>Բարեվարքության հարցերով խորհրդատվական կենտրոն</p>	<p>Կազմակերպության ստորաբաժանում, որն աշխատակիցներին տրամադրում է խորհրդատվություն աշխատանքի հետ կապված բարեվարքության կամ էթիկական մարտահրավերների լուծման վերաբերյալ:</p>
<p>Բարեվարքության հարցերով ղեկավար</p>	<p>Բարեվարքության հարցերով ղեկավարը սովորաբար այն անձն է, ով պատասխանատու է կազմակերպության ներսում բարեվարքության ամրապնդման համար: Սակայն, կազմակերպության այլ անդամներ ևս կարող են նպաստել բարեվարքության հաստատմանը՝ առանց դրա համար պաշտոն</p>

	<p>նապես պատասխանատու լինելու: Որոշ դեպքերում ասպարեզ են գալիս ականավոր բարեվարքության հարցերով դեկավարներ, որոնք առաջնորդում են այդ գործընթացը ոչ թե կոնկրետ կազմակերպության մեջ, այլ ողջ հասարակության շրջանակներում:</p>
<p>Բարեվարքության ստուգում</p>	<p>Նախքան աշխատանքի ընդունվելը կամ աշխատանքի ընթացքում ձեռնարկվող միջոցներ, որոնք նպատակ ունեն գնահատել անձի հակումներն ու հատկանիշները ազնիվ, ոչ ազնիվ կամ ոչ արդյունավետ վարքագծի հետ կապված:</p>
<p>Բարեվարքության վերաբերյալ մոտեցում</p>	<p>Այս մոտեցումն ուղղված է կոռուպցիայի նվազեցմանը և/կամ բարեվարքության կամ էթիկայի հետ կապված մարտահրավերների լուծմանը և ունի հետևյալ հատկանիշները.</p> <ul style="list-style-type: none"> • հիմնված է արժեքների վրա, • իրազեկված է քաղաքականությունների, օրենքների ու կանոնների և դրանց պրակտիկ կիրառման միջև առկա անհամապատասխանությունների մասին: • կենտրոնացված է համագործակցության վրա, նպատակ ունենալով ապահովել իրավախախտողների կողմից խնդիրների վերհանումը բարեվարքության կանոնների հիման վրա աշխատելու միջոցով, օգտագործելով բախումների լուծման մեթոդները, հատկապես վեձերի լուծման այլընտրանքային մեթոդները:

	<ul style="list-style-type: none"> • միտված է խնդիրների լուծմանը • տալիս է ավելի շատ հայեցողություն • Բարեվարքության վերաբերյալ մոտեցումը կարելի է կիրառել ներքևից վերև և վերևից ներքև տարբերակներով: Այն համապատասխանեցման մոտեցման հակառակ տարբերակն է:
<p>Բարեվարքության վերաբերյալ պակտ</p>	<p>Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից մշակված Բարեվարքության վերաբերյալ պակտը կոռուպցիայի կանխարգելման գործիք է, որը հիմնականում օգտագործվում է հանրային պայմանագրերի ոլորտում: Այն համաձայնագիր է պայմանագրի կնքման առաջարկ կատարած պետական մարմնի և այդ պայմանագրի կնքման համար հայտատու ընկերությունների միջև առ այն, որ նրանք պայմանագրի շրջանակներում ձեռնպահ են մնալու կաշառքից, գաղտնի գործարքից և այլ կոռուպցիոն գործողություններից: Բարեվարքության վերաբերյալ պատկերի մեծ մասը կնքվում են առցանց՝ բացառելու հայտատու կազմակերպությունների և որոշում կայացնողների միջև կապը: Հաշվետվողականության ապահովման նպատակով Բարեվարքության վերաբերյալ պակտերը ներառում են նաև մշտադիտարկման համակարգ, որը սովորաբար իրականացվում է քաղաքացիական հասարակության կամ այլ արտաքին խմբերի կողմից:</p>

<p>Բարեվարքության տեսանկյուն</p>	<p>Բարեվարքության տեսանկյունը վերլուծական միջոց է՝ պարզելու համար տվյալ իրավիճակում, գործողության կամ որոշման մեջ կամ շահառուի վարքագծում առկա են արդյոք բարեվարքության հիմնական տարրերը, այսինքն՝ հաշվետվողականությունը, իրավասությունը և էթիկան, կոռուպցիայի բացառմամբ:</p>
<p>Բարեվարքության ուսուցում</p>	<p>Ուսուցում և վերապատրաստում, որը նպաստում է բարեվարքության հետ կապված և հակակոռուպցիոն գործունեությանը՝ արժեքների վրա հիմնված, համագործակցության, գործնական ուսուցման, խնդիրների լուծման և քիչ հայեցողություն ունեցող գործընթացի միջոցով, որն իրականացվում է վերևից ներքև և ներքևից վերև ուղղություններով: Բարեվարքության վերաբերյալ ուսուցումը կոչված է տարբեր տարիքի և մասնագիտության մարդկանց վերապատրաստմանը, նպատակ ունենալով խթանել նրանց կողմից պրակտիկ գործիքների կիրառումն այլ անձանց կողմից բարեխիղճ վարքագիծ պահանջելու առումով, ինչպես նաև նպաստել նրանց կողմից անձնական և աշխատանքային հարաբերություններում բարեվարքության նորմերի կիրառմանը:</p>
<p>Բարեվարքություն</p>	<p>Ըստ Ինթեգրիթի էքշն կազմակերպության սահմանման, բարեվարքությունը կազմակերպության՝ իր գործունեություն-</p>

	<p>նը հաշվետվողականության, արհեստավարժության և էթիկայի նորմերի հիման վրա կազմակերպելու մշակույթն է, որը բացառում է կոռուպցիայի առկայությունը: Կազմակերպության մեջ այն չպետք է դիտարկվի որպես մի երևույթ, որը կամ առկա է կամ ամբողջությամբ բացակայում է: Բարեվարքությունը հանգեցնում է վստահության ձևավորմանը և պահանջում է արժանահավատություն շահառուների կողմից: Վստահությունն ինքնին բավարար չէ, քանի որ կազմակերպությունը պետք է արժանի լինի այդ վստահությանը:</p>
Բարձր գին սահմանելը	Ապրանքի համար չափազանց բարձր գին սահմանելը
Բարձրաձայնում	Երբ աշխատակիցը կազմակերպության ներսում որևէ մեկի վատ կամ անօրինական վարքագծի վերաբերյալ մտահոգություն է հայտնում կազմակերպության ղեկավարներից մեկի մոտ:
Բարոյականություն	Բարոյականությունը ակնկալվող վարքագծի վերաբերյալ սոցիալական նորմերն են: Դրանք վերաբերում հասարակության կողմից լավ կամ վատ, ճիշտ կամ սխալ համարվող երևույթներին:
Բաց կառավարում	Կառավարման տեսություն, համաձայն որի քաղաքացիներն իրավունք ունեն ծանոթանալ կառավարության փաստաթղթերին և ընթացակարգերին՝ արդյունավետ հանրային վերահսկողություն իրականացնելու համար: Լայն մեկնա-

	<p>բանությանը այն հակադրվում է «պետության համար արդարացում» հասկացությանը և այլ նկատառումներին, որոնք միտված են օրինականացնել պետական գաղտնիքի ծավալուն լինելու հանգամանքը:</p>
<p>Բաց պայմանագրային մրցույթ</p>	<p>Այն հանդիսանում է նորմերի և պրակտիկայի համակցություն, որն ուղղված է տեղեկատվության առավելագույնս մատչելի դարձնելուն և հանրային պայմանագրերի կնքման, ներառյալ տենդերների, կատարման և ավարտի հետ կապված գործընթացներին մասնակցության խթանմանը: Այն ներառում է տարատեսակ պայմանագրեր, սկսած ապրանքների գնման հետ կապված պայմանագրերից մինչև համալիր պայմանագրեր, համատեղ ձեռնարկությունների համաձայնագրեր, արտոնագրերի և արտադրանքի բաշխման մասին պայմանագրեր: Բաց պայմանագրային մրցույթներն ընդգրկում են հանրային պայմանագրերի բոլոր տեսակները, այդ թվում՝ հանրային, մասնավոր, և դոնորների համատեղ հատկացումների հիման վրա ֆինանսավորվող պայմանագրերը:</p>
<p>Բաց տեղեկատվություն</p>	<p>Գաղափար, համաձայն որի որոշակի տեղեկատվությունը պետք է հասանելի լինի բոլոր մարդկանց համար, իրավունք վերապահելով նրանց օգտագործել և վերահրապարակել այն՝ առանց հեղինակային իրավունքի, պատենտ-</p>

	ների կամ վերահսկողության այլ մեխանիզմների վրա հիմնված սահմանափակումների: Բաց տեղեկատվության վերաբերյալ շարժման նպատակները համընկնում են բոլոր այլ «բաց» համարվող շարժումների նպատակների հետ, ինչպիսիք են օրինակ՝ բաց աղբյուրները, բաց համակարգչային ծրագրերը, բաց բովանդակությունն ու մատչելիությունը և այլն:
«Բլատ»	Ռուսական բառ, որի տակ նկատի է ունեցվում անձնական կապեր, հաճախ պետական պաշտոնյաների հետ, որոնք «ավելի դյուրին են դարձնում» ապրանքների, ծառայությունների կամ արտոնությունների ձեռք բերման ճանապարհը:
Բյուրոկրատական քաշքշուկ	Այս եզրույթն օգտագործվում է նկարագրելու համար չափազանցված թղթաբանությունը, որն անհրաժեշտ է ձևական պահանջներին համապատասխանելու, հաստատում ստանալու կամ որևէ նպատակի հասնելու համար: Սովորաբար օգտագործվում է պետական ինստիտուտների բյուրոկրատական ձևակերպումների և ընթացակարգերի հետ կապված:
Բյուրոկրատիա	Կառավարման համակարգ, որտեղ կարևոր որոշումների զգալի մասն ընդունվում է չընտրված պաշտոնյաների (այսինքն՝ մասնագիտական բյուրոկրատների) կողմից, հաճախ զուգորդվելով

	համալիր վարչական ընթացակարգերով:
Բողոք	Որևէ բանի հրապարակայնորեն հավանություն չտալը կամ վիճարկելը:
Բոյկոտ	Սոցիալական կամ առևտրային հարաբերությունների դադարեցում՝ որպես պատժամիջոցի կամ բողոքի դրսևորում, օրինակ՝ ապրանքներ գնելու կամ սոցիալական գործընթացներին մասնակցելու մերժում:
Գաղտնագերծում	Որևէ տեղեկատվության հրապարակում, այն երրորդ կողմին կամ հանրությանը հասանելի դարձնելու հետ կապված գործողություն:
Գաղտնիություն	Տեղեկատվությունը գաղտնի պահելու հայեցողություն:
Գենդերային հավասարություն	Այն հայտնի է նաև որպես սեռերի հավասարություն, որի համաձայն տղամարդը և կինը պետք է արժանանան հավասար վերաբերմունքի և չպետք է խտրականության ենթարկվեն սեռական հատկանիշի հիման վրա, եթե նման տարբերակված մոտեցման համար առկա չէ ողջամիտ կենսաբանական պատժառ:
Գլոբալ հնթեգրիթի	ԱՄՆ-ում գործող շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն, որը գործունեություն է ծավալում հակակոռուպցիոն ոլորտում և նպաստում է կառավարությունների թափանցիկությանն ու հաշվետվողականությանը ողջ աշխարհում: Այն միավորում է ավելի քան 1000 հետազոտող և փոր-

	ձագետ, ովքեր մասնակցում են Գլոբալ Ինթեգրիթի կազմակերպության զեկույցի նախապատրաստմանը (տես հաջորդ եզրույթը):
Գլոբալ Ինթեգրիթի կազմակերպության զեկույց	Գլոբալ Ինթեգրիթի կազմակերպության կողմից պատրաստված զեկույց, որում ամփոփված է ազգային հետազոտողների աշխատանքը, ովքեր գնահատում են ազգային կառավարությունների թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև առանձին երկրներում հակակոռուպցիոն միջոցների առկայությունն ու արդյունավետությունը՝ բարեվարքության վերաբերյալ մշակված ցուցանիշների հիման վրա:
Գողացված սեփականություն	Ոչ իրավական եղանակով ձեռք բերված ապրանքներ
Գնահատում	Պլանավորված և փաստացի արդյունքների միջև առկա տարբերության և այդ տարբերությունների պատճառների լիակատար քննություն:
Գնումներ	Ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համակարգված գործընթաց, օրինակ՝ հրապարակային տեղերների, էլեկտրոնային գնումների կամ երբեմն Բարեվարքության վերաբերյալ պակտերի միջոցով:
Գործակալության խնդիր	Պատվիրատու-կատարող հարաբերություննից բխող շահերի բախում, երբ կատարողի շահերը չեն համընկնում պատվիրատուի շահեր հետ:
Գործակալու-	Պատվիրատու-կատարող հարաբերու-

<p>թյան ծախսեր</p>	<p>թյունների արդյունքում առաջացող ծախսեր, երբ կատարողին վճարում են պատվիրատուի անունից հանդես գալու համար: Այս ծախսերը խթանում են կատարողի գործողությունները և նպաստում են կատարողի և պատվիրատուի շահերի ներդաշնակեցմանը: Որպես օրինակ կարող են ծառայել փոխհատուցումները, պարգևատրումները, արժեթղթերը և այլ տարբերակներ:</p>
<p>Գործակալության տեսություն</p>	<p>Այս տեսությունը ուսումնասիրում է գործակալության խնդիրները և հարաբերությունները պատվիրատուների և կատարողների միջև:</p>
<p>Գործառույթային վերլուծություն</p>	<p>Այն կապում է գործառույթները կոռուպցիայի պատճառների և հետևանքների հետ: Դրանք չեն հանդիսանում կոռուպցիային առնչվող ծախսերի և շահույթների մասին բարոյական գնահատական, սակայն օգնում են (ա) մասամբ բացատրել կոռուպցիայի կենսունակությունը և (բ) լուսաբանել բարեփոխումների կենսունակ այլընտրանքների հնարավորությունները: Հաջողության հասնելու համար բարեփոխումները պետք է ունենան կենսունակ այլընտրանքներ կոռուպցիայի ամենակարևոր գործառույթների առնվազն մի մասի համար:</p>
<p>Գործնական ուսուցում</p>	<p>Գործնական ուսուցումը կրթական գործընթաց է, որի ընթացքում մարդիկ ուսուցումը զուգորդում են իրական խնդիրների լուծման հետ, որն արտա-</p>

	<p>ցովում է նրանց գործողություններում: Սովորողները գիտելիքը ձեռք են բերում ավելի շատ գործողությունների և պրակտիկայի շնորհիվ, քան ավանդական ուսուցման (այսինքն՝ դասախոսությունների, ընթերցանության և այլնի) միջոցով: Գործնական ուսուցումը մի քայլ առաջ է տեսական խնդիրների լուծումներից: Այն ներառում է ձեռք բերված սկզբունքներն իրական կյանքում, լսարանից դուրս փորձարկում՝ նպատակ ունենալով ստուգել դրանց գոհացուցիչ արդյունքների հանգեցնելու հանգամանքը, այդպիսով վերահաստատելով դրանց կենսունակությունը արդյունքների լույսի ներքո: Գործնական ուսուցումը հաճախ պահանջում է բոլոր այն գործիքների և մոտեցումների կիրառումը, որոնք նպաստում են խնդիրների ամբողջական լուծմանը:</p>
<p>Գործունեության անհավասար դաշտ</p>	<p>Իրավիճակ, որը ծագում է այն դեպքերում, երբ մրցակցողները մրցում են տարբեր պայմանների և պահանջների հիման վրա, ստեղծելով անարդար առավելություններ և ոչ շահավետ պայմաններ:</p>
<p>Գործունեության արտոնագիր</p>	<p>Առևտրային կամ կազմակերպչական գործունեություն իրականացնելու թույլտվության տրամադրում, որը հաճախ մատնանշում է որոշակի չափանիշներին համապատասխանելու հանգամանքը:</p>
<p>«Գորշ գոտի»</p>	<p>Ոչ հստակ ձևով սահմանված ոլորտներ կամ իրավական առումով անորոշ կար-</p>

	գավորման ենթարկված ոլորտներ: Սա կարող է վերաբերել այն գործունեությանը, որն իրավական առումով օրինական է, սակայն էթիկական չէ:
Գավադորություն	Գաղտնի կամ ապօրինի համագործակցություն որևէ բան փոփոխելու նպատակով:
Գատական իշխանություն	Արդարադատություն իրականացնող անձինք, ինչպիսիք են դատավորներից բաղկացած մարմինը կամ դատական համակարգը:
Գժգոհություն	Իրավախախտման կամ ենթադրյալ իրավախախտման մասին բողոք, որը վրդովմունք է առաջացնում և կարող է հայցի հիմք հանդիսանալ:
Գիվանագիտություն	Բանակցություններ վարելու, մարդկանց հետ շփվելու հմտություն, որը նպատակ ունի նվազեցնել կամ վերացնել անբարյացակամությունը:
Դյուրացմանն ուղղված վճարներ/ «Յուղման վճարներ»	Պետական պաշտոնյային կամ լիազորություն ունեցող այլ անձին տրված վճար՝ նրա կողմից իր բնականոն գործառնությունների ընթացքի՝ վճարողի օգտին արագացման կամ փոխախման նպատակով:
Դրամաշորթություն	Պաշտոնյաների կողմից այլ անձանցից ապօրինի կերպով գումար կամ արժեքավոր իրեր պահանջելը, ինչպես նաև ուժի կիրառմամբ կորզելը:
Եկամտի կրկնակի աղբյուր	Ֆինանսավորման երկու կամ ավելի աղբյուրներից օգտվելու պրակտիկա, երբ դրանցից մեկը տվյալ գործունեու-

	թյան համար ավելի քան բավարար է, կամ միևնույն նախագծի համար երկու և ավելի դրամաշնորհի ստանալը, առանց դոնոր կազմակերպություններին պատշաճ հաշվետվություն ներկայացնելու:
Ենթադրու- թյուններ	Այս համատեքստում՝ հանրաձանաչ ձշմարտության հիման վրա, առանց ապացույցների որոշումների ընդունում: Սա խնդրահարույց է: Բարեվարքության հետ կապված գործընթացները պետք է հնարավորինս հիմնված լինեն փաստերի վրա:
Երկմտանք	Անվստահության զգացում:
Երկրորդ պլան մղելը	Գործունեության կամ ուշադրության կենտրոնից հեռացնելը, ստորադաս կարգավիճակ տալը:
Զգացմունքային ուսուցում	Այն հանդիսանում է ուսուցման երեք հիմնական տեսակներից մեկը Բենջամին Բլումի սահմանման համաձայն: Մյուս երկու տեսակներն են իմացական ուսուցումը և վարքագծային կամ հոգեշարժական ուսուցումը: Զգացմունքային ուսուցման դեպքում սովորողը, օրինակ՝ հնարավորություն ունի հաղորդակցվել կոռուպցիայի կամ վատ կառավարման արդյունքում անմիջականորեն տուժած անձի հետ և ունի իրական/հուզական փորձով ձեռք բերված պատկերացում նրանց կյանքում դրա նշանակության մասին: Հնարավոր է նաև որևէ բան սովորել որևէ պատմվածքից, ֆիլմից, իրավիճակից կամ նյութերից (ԶԼՄ-ի

	միջոցով), որը կարող է առաջացնել հուզական արձագանք:
Զսպումների և հակակշիռների համակարգ	Անհրաժեշտ համակարգ և միջավայր ապահովող կանոններ և գործընթացներ, որոնք ապահովում են միայն մեկ անձի կամ կառույցի կողմից առանձին բիզնես գործունեության որևէ ոլորտի վերահսկման բացառումը, և յուրաքանչյուր անձի կամ կառույցի համար կարգապահության, օրինականության և այլ հարցերի հետ կապված վերահսկողության իրականացումը:
Ջրոյական հանդուրժողականություն	Ջրոյական հանդուրժողականության քաղաքականությունը մեխանիկորեն պատիժներ է նախատեսում սահմանված կանոնների խախտման համար, նպատակ ունենալով վերացնել անցանկալի վարքագիծը: Ջրոյական հանդուրժողականության քաղաքականությունները լիազորություն ունեցող անձանց արգելում են ցուցաբերել որևէ հայեցողություն կամ փոփոխել պատիժները՝ սուբյեկտիվ հանգամանքների հիման վրա: Նրանք պետք է սահմանեն նախապես նախատեսված պատիժը՝ անկախ անհատի մեղավորության աստիճանից, մեղմացնող հանգամանքներից կամ անձնական հանգամանքներից: Նախապես սահմանված այս պատիժը կարող է խիստ չլինել, սակայն այն միշտ նշանակվում է:
Էթիկա	Բարեվարքության հիմնական տարրերից մեկը, որը ենթադրում է արժանա-

	<p>պատիվ գործելակերպ՝ հիմնված հանրային շահերի վրա: Էթիկան սահմանում է հատուկ ցուցումներ վարքագծի վերաբերյալ, որոնք պետք է կամ չպետք է կիրառել որպես անձնական, մասնագիտական կամ կազմակերպության պարտականություն:</p>
<p>Էթիկայի կանոններ</p>	<p>Հիմնական ուղեցույց և աղբյուր աշխատակազմի համար՝ էթիկայի նորմերի հիման վրա ամենօրյա որոշումներ ընդունելու համար: Սա նշանակում է հստակեցնել Ձեր կազմակերպության տեսլականը, առաքելությունը, արժեքները և սկզբունքները, ներդաշնակեցնելով դրանք մասնագիտական վարքագծի չափանիշներին: Այն պետք է պարունակի ակնկալվող անհատական վարքագծի նորմերի և Ձեր կազմակերպության գործունեության վերաբերյալ հստակ ուղեցույց:</p>
<p>Էթիկական իրավասություն</p>	<p>«Սուսինձ», որն ապահովում է էթիկական ռեժիմի ամբողջականությունը: Այն բաղկացած է 3 գործոնից. (ա) բարեվարքության կամ հանրային ոլորտի հետ կապված էթիկական խնդիրների բացահայտման և սահմանման ունակություն, (բ) այդ խախտումների նկատմամբ կիրառման ենթակա օրենսդրության, կանոնագրքի և չափանիշների իմացություն, և (գ) լուծումներ և դրանց կիրառման եղանակներ առաջարկելու կարողություն:</p>

	Էթիկական իրավասությունը կարող է ստուգվել:
Էթիկական ներդրում	Ներդրումների քաղաքականություն, որը պահանջում է ներդրումներ կատարել միայն այն կազմակերպություններին, որոնք առաջնորդվում են էթիկական սկզբունքներով:
Էթիկական վարքագիծ	Էթիկական վարքագիծը նշանակում է կազմակերպության համապատասխանությունը այն սկզբունքների և պարտականությունների համակարգին, որոնք նախատեսված են կազմակերպության որոշումների կայացման գործընթացի և վարքագծի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար: Այսպիսի վարքագիծը հիմնված է այն գիտակցության վրա, թե ինչն է կարևոր, պարտադիր կամ թույլատրելի իրավական, բարոյական և մասնագիտական առումով: Եթե կազմակերպությունը գործում է էթիկայի նորմերին համապատասխան, ապա այն չի չարաշահում իր դիրքը և դրսևորում է արդար և անաչառ վերաբերմունք բոլոր շահառուների նկատմամբ: Նրա որոշումները կատարվում են ուշադիր, թափանցիկ և հետևողական կերպով:
Էթիկական ռեժիմ	Էթիկական ռեժիմը բաղկացած է 3 գործոնից. (ա) կազմակերպության առաքելության, վարքագծի կանոնների և արժեքների հստակ ձևակերպում, (բ) այնպիսի ղեկավարում, երբ ինքդ հետևո-

	<p>ղականորեն կիրառում ես քո սովորեցրածը, այսինքն՝ ղեկավարն անձամբ հետևում է այն էթիկական ուղերձներին, որոնք ինքը քարոզում է, և (զ) հուսալի մեխանիզմ բողոքներին արձագանքելու համար:</p>
Էթնիկ պատկանելիություն	<p>Էթնիկ խմբի առանձնահատկություն, էթնիկ խմբի անդամ լինելը:</p>
Էթնոցենտրիզմ	<p>Որևէ մեկի էթնիկ կամ մշակութային խմբի գերակայության վերաբերյալ համոզմունք:</p>
Է-կառավարում	<p>Այն հանդիսանում է էլեկտրոնային կառավարման հակիրճ տարբերակը, հայտնի նաև որպես համացանցային կառավարում, թվայնացված կառավարում, առցանց կառավարում կամ կապակցված կառավարում: Այն բաղկացած է կառավարության հաղորդագրություններից, որոնք իրականացվում են թվայնացված ձևով, օրինակ, կառավարության և քաղաքացիների միջև թվայնացված կապերը, հանրային գնումները, բիզնես կազմակերպությունների արտոնագրումը, զբաղվածության ապահովումը և այլն:</p>
Էկոլոգիացում	<p>Հանրային կապերի կամ մարկետինգի ոլորտի ռազմավարություն, որով տվյալ կազմակերպության գործունեությունը միտումնավոր կերպով ներկայացվում է որպես էկոլոգիապես մաքուր, այնինչ իրականում այդ ցուցանիշը բավականին ցածր է:</p>

<p>Թափանցիկություն</p>	<p>Կառավարությունների, կազմակերպությունների պրակտիկա, որոնք պարզ և բաց ձևով հաղորդում են կարևոր տեղեկատվությունը ներդրողներին, բաժնետերերին և շահառուներին: Հաշվետվողականությունը հաճախ պահանջում է թափանցիկության որոշակի աստիճան: Սակայն թափանցիկությունը մեխանիկորեն չի հանգեցնում հաշվետվողականության:</p>
<p>«Թռիչք հերթում»</p>	<p>Բարեվարքության կամ դրա պակասի համատեքստում, «թռիչք հերթում» նշանակում է ծառայություն մատուցողին տրված վճար՝ ծառայություններ ստանալու հարցում առաջնահերթություն ձեռք բերելու նպատակով:</p>
<p>Ժողովրդավարական ընտրություններ</p>	<p>Գործընթաց, որտեղ երկրում որպես ընտրող գրանցված անձանց պարբերաբար, օրենքով նախատեսված ժամկետներում, հնարավորություն է տրվում քվեարկել իրենց նախընտրած անձանց օգտին, որպեսզի վերջիններս ներկայացնեն նրանց շահերը իրենց երկրի խորհրդարանում (կամ այլ օրենսդրական մարմնում): Կան ընտրությունների ձախողման տարբեր եղանակներ, սակայն ընտրությունները դառնում են ժողովրդավարական, երբ պահպանվում են հետևյալ պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> • արդյունքների ձանաչում հաղթողների և պարտվողների կողմից, • անկողմնակալություն և արդարություն

	<p>ընտրությունների անցկացման ընթացքում,</p> <ul style="list-style-type: none"> • ընտրությունները գերծ են բռնությունից և սպառնալիքներից • պետության քաղաքացիների մեծամասնության մասնակցություն • ընտրություններ կազմակերպողների պրոֆեսիոնալիզմը քվեախցերի դասավորման, քվեաթերթիկների հաշվարկի և այլ հարցերում • քվեարկության արդյունքների հրապարակային հայտարարումը, • օրենքով սահմանված ընդմիջումների պահպանումը պարբերական ընտրությունների անցկացման համար, • թեկնածուների նշանակման, ընտրությունների համար սահմանված ծախսերի չգերազանցման և այլ հարցերում իրավունքի գերակայության ապահովում, • օրենքով նախատեսված ժամկետների պահպանումը ընտրություններ անցկացնելիս, • թափանցիկությունը քվեաթերթիկների հաշվման, արդյունքների հայտարարման և դրանց հրապարակման հարցում:
<p>Ժողովրդավարություն</p>	<p>Կառավարման համակարգ, որտեղ մարդիկ իրավունք ունեն ընտրել իրենց առաջնորդներին ազատ ընտրությունների միջոցով, արտահայտել իրենց պահանջները, մտահոգությունները և առաջնահերթությունները և շատ դեպքերում ընտրել անձանց, որոնք ներկա-</p>

	<p>յացնում են իրենց շահերը տեղական, շրջանային/նահանգային և պետական մակարդակներում:</p> <p>Ժողովրդավարությունը սովորաբար հայտնի է որպես մեծամասնության քվեարկության արդյունքների հիման վրա կառավարում՝ միաժամանակ ապահովելով փոքրամասնությունների իրավունքները:</p>
<p>Իմացական ուսուցում</p>	<p>Այն հանդիսանում է ուսուցման երեք հիմնական տեսակներից մեկը Բենջամին Բլումի սահմանման համաձայն: Մյուս երկու տեսակներն են Զգացմունքային ուսուցումը և Վարքագծային կամ Հոգեշարժական ուսուցումը: Իմացական ուսուցումը հիմնված է տեղեկատվության, գիտելիքի ձեռքբերման և մտածելու կարողության վրա: Կոռուպցիայի և բարեվարքության համատեքստում այն հաճախ ներառում է միջազգային և ազգային օրենքների և ընթացակարգերի, պատմության, սոցիալական վարքագծերի և մշակույթի ուսումնասիրություն:</p>
<p>Իրավաբանական կամ սոցիալական կլինիկա</p>	<p>Իրավաբանական կամ սոցիալական կլինիկաները հիմնվում են քաղաքացիական հասարակության կազմակերպության/ոչ կառավարական կազմակերպության կամ համալսարանի կողմից, որոնք նպատակ ունեն քաղաքացիներին տրամադրել անվճար խորհրդատվություն նրանց համար կարևոր իրավական և սոցիալական հարցերի վերաբերյալ:</p>

	կամ տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե որտեղ նրանք կարող են ստանալ անհրաժեշտ իրավաբանական կամ սոցիալական խորհրդատվություն:
Իրավունքների մերժում	Գործողություն, որով խոչընդոտվում է անձի կողմից իր անձնական, սոցիալական կամ այլ իրավունքների իրականացումը:
Լավագույն փորձ	Գործելակերպ կամ մեթոդաբանություն, որը փորձի և հետազոտության միջոցով հանգեցնում է ցանկալի կամ օպտիմալ արդյունքի: Աշխատառձ, որը միանգամայն ընդունելի է և թափանցիկ՝ կազմակերպության կամ ոլորտի շրջանակներում ընդունելի համարվող հանգամանքներում:
Լիարժեք բացահայտում	Ամբողջական տեղեկատվության տրամադրում:
Լոբինգ	Քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնողի, սովորաբար պետական պաշտոնյայի կամ օրենսդրի վրա ազդեցություն գործելու փորձ:
Լուծված խնդիրների մակարդակ	Այն հիմնական շահառուների օգտին լուծված խնդիրների տոկոսային արտահայտությունն է: Լուծված խնդիրների մակարդակը կառավարման բարեփոխումների արդյունքների գնահատման սակավաթիվ հուսալի միջոցներից է: Կառավարման բարեփոխումների մեծ մասը կարելի է գնահատել միայն դրանց արդյունքների և գործողությունների հիման վրա:

Լուծում	Հիմնական շահառուների շահերից բխող որևէ խնդրի լուծում: Բարեվարքության ոլորտում մենք առաջին հերթին հետաքրքրված ենք այն խնդիրներով, որոնք լուծվում են թափանցիկության, հաշվետվողականության, բարեվարքության և այլնի կիրառման միջոցով: Ուշադրության կենտրոնում են գտնվում բարելավված ծառայությունների և կյանքի որակի ազդեցությունները և արդյունքները:
Խարդախություն	Քրեորեն պատժելի խաբեություն, կեղծ ներկայացուցչություն կամ տեղեկատվության տրամադրում՝ անարդար առավելության հասնելու համար:
Խեղաթյուրում	Տեղեկատվության կամ վարքագծի հետ կապված մոլորեցնող մեկնաբանություն:
Խնդիրներ	Համայնքներում բարեվարքության կառուցման (ՀԲԿ) մոնիտորինգի աշխատանքների համար խնդիրները կոռուպցիայի կամ ոչ արդյունավետ կառավարման դեպքերն են, որոնք անհրաժեշտ է բացահայտել: Բացահայտման ենթակա խնդիրների ընտրությունը պետք է կատարվի հնարավորինս օբյեկտիվորեն, որպես նշանակալի անհապատասխանություն, օրինակ՝ ա) գործարքի և դրա իրական կատարման, բ) քաղաքականության և դրա իրականացման կամ գ) իրավունքի ու հասանելիության միջև:
Խնդիրների	Շղթան փակվում է, երբ առկա է հետա-

<p>հանգուցալուծում</p>	<p>դարձ կապի մեխանիզմը, որը խթանում է համապատասխան արձագանքը: Այդպիսի օրինակ է բավարարող պատասխանը տեղեկատվության մատչելիության վերաբերյալ ներկայացված պահանջի դեպքում, կամ քաղաքացու խնդրի արդարացի լուծումն այն դեպքում, երբ համապատասխան շահառուները իրազեկվում են ընդունված որոշումների վերաբերյալ: Երբեմն այս գործընթացն իրականացվում է հաղորդագրության, թեժ գծի, էլեկտրոնային փոստի, կայքերի միջոցով, սակայն դա պարտադիր պայման չէ: Պարզապես տեխնիկապես ավելի հեշտ է ստուգել, թե արդյոք խնդիրը ստացել է իր հանգուցալուծումը թե ոչ:</p>
<p>Ծառայությունների մասին կանոնադրություն</p>	<p>Կազմակերպության կողմից մատուցվող ծառայության չափանիշների վերաբերյալ շահառուների սպասելիքները սահմանող փաստաթուղթ, որը երբեմն ընդունվում է շահառուների և կառավարության միջև բանակցությունների արդյունքում: Այն նշանակում է նաև ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից հրապարակված ծառայությունների նպատակակետերի վերաբերյալ հայտարարություններ, որոնք սահմանում են կազմակերպության համար չափանիշներ և կարող են սահմանել հասարակության համար վնասի հատուցում, եթե դրանք չեն</p>

	<p>իրականացվում: Դրանք հայտնի են որպես «Քաղաքացիների կանոնադրություններ» (Մեծ Բրիտանիա) կամ «Հանրային ծառայությունների կանոնադրություններ» (Կորեա):</p>
<p>Կազմակերպչական փոփոխություն</p>	<p>Կազմակերպությունների մասին տեսություն, ըստ որի կազմակերպությունը պետք է կենտրոնանա կազմակերպության ներսում վարքագծի հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված փոփոխություններ կատարելու կարողությունների ընդլայնման վրա, համարելով այն իր հիմնական գործառույթներից մեկը: Այս մոտեցումն առաջին հերթին զբաղվում է նշված խնդիրների բացահայտմամբ և վերլուծությամբ, այնուհետև ձևակերպվում են լուծումները, որոնք իրականացվում են կազմակերպության ներսում փոփոխություններ կատարելու միջոցով:</p>
<p>Կազմակերպության էթիկա</p>	<p>Մասնագիտական և/կամ կազմակերպության համատեքստում դրսևորվող վարքի և կազմակերպության կողմից շահառուների նկատմամբ դրսևորվող վարքագծի վերաբերյալ հատուկ ուղեցույց: Այն շարադրում է վարքագծի դրսևորումներ, որոնք պետք է կամ չպետք է տեղի ունենան պարտականությունների իրականացման ընթացքում:</p>
<p>Կազմակերպության մշակույթ</p>	<p>Դիրքորոշումների, համոզմունքների և արժեքների հիմնական օրինաչափություններ, որոնք դրված են կազմակերպության կողմից:</p>

	պության գործունեության և ընթացակարգերի հիմքում:
Կայունություն	Տնտեսական առաջընթացի, սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի հետ կապված մտահոգությունների ինտեգրացիան ապագա սերունդների համար կայուն և ավելի լավորակ կյանք ապահովելու նպատակի հետ:
Կանխակալ կարծիք	Որևէ խմբի վերաբերյալ նախապես ձևավորված ոչ նպաստավոր կարծիք կամ զգացողություն:
Կաշառակերություն	Նյութական (օրինակ՝ դրամ) կամ ոչ նյութական (օրինակ՝ ծառայություն) ոչ պատշաճ արտոնության առաջարկի, ընդունման, տրամադրման կամ ստացման հետ կապված գործողություն՝ պաշտոնական գործողություն կատարելու կամ չկատարելու դիմաց, կամ որի նպատակն է ազդեցություն գործել պաշտոնատար անձի վրա նրա պաշտոնավարման ընթացքում:
Կաշառք վճարողների ինդեքս	Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից մշակված ինդեքս՝ օտարերկրյա կոռուպցիոն գործարքներում աշխարհի գերտերությունների արտահանող ընկերությունների ներգրավվածության հավանականության գնահատման համար: 1999 թ.-ից ի վեր այս ցուցանիշը պարբերաբար հրապարակվում է:
Կառավարում	Կառավարումը նշանակում է կոլեկտիվ միջոցներ, որոնց միջոցով իրականացվում է տվյալ կազմակերպության գոր-

	<p>ծունեության և վարքագծի ուղղորդումը, վերահսկողությունը և հսկողությունը: Այն ներառում է մեխանիզմներ և գործընթացներ, որոնք ապահովում են ակտիվների բաշխման, օգտագործման և տրամադրման մասին որոշումների կայացումը, կատարումը և հաշվետվությունը: Այն կիրառելի է կառավարությունների, հանրային կառավարման բոլոր մակարդակների և կազմակերպությունների համար:</p>
<p>Կառավարումը ստ նպատակների (ԿԸՆ)</p>	<p>Կառավարման ոճ, որն ուղղված է նպատակների ու առաջնահերթությունների պարզեցմանը, և հիմնված է ծրագրերի մշակման, ռեսուրսների տեղաբաշխման, նպատակների իրականացման առաջընթացի նկատմամբ արդյունավետ մշտադիտարկման անցկացման, արդյունքների գնահատման և գործունեության բարելավման վրա:</p>
<p>Կառուցողական ներգրավում</p>	<p>Համայնքում բարեվարքության կառուցման մի փուլ, որի ընթացքում կատարվում է տվյալների փոխանակում, լուծումների հստակեցում, բանակցություններ են տարվում ծրագրի իրականացնողների հետ վեր հանված խնդիրների վերաբերյալ գտնված լուծումները կյանքի կոչելու ուղղությամբ, և քարոզվում է բարեփոխումների կարևորությունը:</p>
<p>Կատարող</p>	<p>Այլ անձի համար կամ նրա անունից գործող անձ:</p>
<p>Կատարողա-</p>	<p>Գնահատման հատուկ տեսակ, որը սո-</p>

<p>Կանի գնահատում</p>	<p>Վորաբար օգտագործվում է վերադասի կողմից աշխատակցի կողմից իր առջև դրված հատուկ խնդիրների իրականացման գործում անհատական առաջընթացի գնահատման համար: Կատարողականի գնահատումը կարող է ներառել գործընկերների, վերադասի, ստորադասների դիտարկումները, որը հայտնի է որպես «360 աստիճան»-ի հետադարձ կապ:</p>
<p>Կատարողականի կառավարում</p>	<p>Կատարողականի կառավարումն ընդհանուր առմամբ ընկալվում է որպես ողջ կազմակերպության, դրանց գործադիր տնօրենների և անձնակազմի կատարողականի կառավարում:</p>
<p>Կատարողականի չափանիշներ</p>	<p>Պահանջվող կատարողականի չափորոշիչ հանդիսացող չափանիշ, որը կիրառելի է կառավարման և գործունեության տարբեր ոլորտներում:</p>
<p>Կատարողականի ցուցանիշներ</p>	<p>Սրանք հանդիսանում են ակնկալվող չափանիշներին համապատասխանության տեսանկյունից կատարողականի գնահատման համար օգտագործվող միջոցներ, որոնք հիմնված են կազմակերպության կողմից հավաքված տվյալների վրա:</p>
<p>Կեղծ հաշվապահություն</p>	<p>Դրամական հաշիվների փոփոխումը, կեղծումը կամ ներկայացումը, որի արդյունքում հաստատության, կազմակերպության կամ անհատի գույքի, պարտավորությունների և ֆինանսների հետ կապված իրական վիճակը հստակ չի</p>

	երևում: Տիպիկ օրինակ է ակտիվների գերազնահատումը և պարտականությունների թերազնահատումը:
Կեղծ հավատարմություն	Հավատարմություն կամ նվիրվածություն, որը իրականությանը չի համապատասխանում:
Կլիենտիզմ	Առանձին ապրանքների և ծառայությունների բաշխում՝ վստահորդների կամ ենթակաների կողմից քաղաքական հավատարմության և աջակցության դիմաց:
Կոլեկտիվ գործողություն	Տարբեր սեկտորների կամ միևնույն սեկտորի բազմաթիվ մասնակիցների ընդհանուր նախաձեռնություն, որի նպատակն է միավորել ջանքերը օրենքների, քաղաքականության լուսաբանման կամ ընթացակարգերի համաձայնեցման համար:
Կողմնակալություն	Որևէ մեկի կամ որևէ բանի օգտին գործելը, երբ այդ գործելակերպը համարվում է անարդար:
Կոռուպցիա	1. վերապահված կամ պետական իշխանության չարաշահում մասնավոր կամ անձնական շահ ստանալու նպատակով. 2. մենաշնորհային կարգավիճակ, երբ պատվիրատուն ունի լայն հայեցողություն և գործում է առանց հաշվետվողականության: Այս իրավիճակը հաճախ ներկայացվում է որպես Կոռուպցիա = Մենաշնորհ+Հայեցողություն-Հաշվետվություն (Ռոբերտ Քլիթգարդ). 3. գործողություն, որի նպատակն է

	<p>ծառայողական պարտականության և այլոց իրավունքների հետ անհամատեղելի առավելության տրամադրումը: Ի թիվս այլ գործողությունների, այն կարող է ներառնել կաշառակերություն, հարկադրանք և դրամաշորթություն:</p>
<p>Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր</p>	<p>2003 թվականի հոկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հռչակեց դեկտեմբերի 9-ը որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր, ընդգծելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (ՄԱԿԿԴԿ) ընդունումը և բարձրացնելով կոռուպցիայի հիմնախնդրի վերաբերյալ իրազեկումը ողջ աշխարհում:</p>
<p>Կոռուպցիայի ընկալման ինդեքս (ԿԸԻ)</p>	<p>177 երկրների (2014թ.-ի դրությամբ) համար սահմանված, միավորների վրա հիմնված ցուցանիշ, որը գնահատում է պետական սեկտորում տեղի ունեցող կոռուպցիայի ընկալման աստիճանը: Այն իրականացվում է Թրանսպարենսի Ինթերնեշնլի կողմից, հրապարակվում է յուրաքանչյուր տարի, և հիմնված է իրազեկված մարդկանց ընկալումների և ԹԻ-ի կողմից մշակված այլ ցուցանիշների վրա:</p>
<p>Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր</p>	<p>Հանրային կարծիքի հարցում, որն իրականացվում է Թրանսպարենսի Ինթերնեշնլի կողմից ողջ աշխարհում և նպատակ ունի հավաքել հարցվողների տեսակետները և կարծիքները կոռուպցիայի մասին:</p>
<p>Կորպորատիվ</p>	<p>Իր բոլոր գործողությունների համար</p>

<p>սոցիալական պատասխանատվություն (ԿՄՊ), օգտագործվում է նաև որպես Կորպորատիվ պատասխանատվություն</p>	<p>բոլոր շահառուների առջև ընկերության կամ կազմակերպության հաշվետու լինելու պարտավորությունը, նպատակ ունենալով ապահովել կայուն զարգացում ոչ միայն տնտեսական, այլ նաև բնապահապանական, սոցիալական և կառավարման ոլորտներում (հաճախ դրանք հանդես են գալիս ԲՄԿ հապավմամբ):</p>
<p>ձնշում</p>	<p>Տվյալ դեպքում այլ անձին անհարկի համոզելը կամ նրան սպառնալը ինչ-որ բան կատարելու համար:</p>
<p>Մանկավարժական մեթոդներ (հատուկ հարմարեցված բարեվարքության դասավանդմանը)</p>	<p>Գոյություն ունի բարեվարքություն և հակակոռուպցիոն գործունեություն դասավանդելու վեց հիմնական մանկավարժական մեթոդ. 1) նորմատիվ և հայեցակարգային, 2) էթիկական և բարոյական, 3) ուսումնական իրավիճակներ (իր բոլոր ձևաչափերում), 4) քննադատական դիտարկումներ, 5) խնդրի լուծման վրա կենտրոնացած ուսուցում և 6) գործնական ուսուցում: Մեթոդների բազմազանությունը խորացնում և բարելավում է ուսուցումը, քանի որ մարդիկ սովորում են տարբեր եղանակներով:</p>
<p>Մասնակցային ժողովրդավարություն</p>	<p>Քաղաքական և փիլիսոփայական տեսակետ կառավարության կողմից որոշումների կայացման գործընթացում ազդեցություն կրող քաղաքացիների ուղղակի ներգրավվածության վերաբերյալ: Ունանք գտնում են, որ այն կարևոր գոր-</p>

	ծոն է ժողովրդավարական կառավարման գոյության համար: Հարակից եզրույթ է համարվում քաղաքացիների մասնակցությունը:
Մասնավոր, ոչ առևտրային կազմակերպություն	Տորմալ կազմակերպության կամ մասնավոր ոչ առևտրային ծառայություն մատուցող կազմակերպության կամավորական ծրագիր, որն իրականացնում է առնվազն մեկ վճարվող մասնագետ, որտեղ կամավորները տրամադրում են նվազագույնը մի քանի ծառայություն անկախորեն կամ կառավարության ուղղորդմամբ:
Մասնավորեցում	Կառավարությունից ամբողջությամբ կամ մասամբ մասնավոր սեկտորին անցնող լիազորություններ: Սա կարող է տեղի ունենալ, երբ առկա է քաղաքական որոշում առ այն, որ կառավարության համար այդպիսի պատասխանատվության պահպանումն այլևս չունի շարունակական հանրային քաղաքական պատճառ, երբ հանրային ծառայություն մատուցող ծրագիրը կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունը լայնորեն կոռումպացված է, կամ երբ պարտականությունները կարող են իրականացվել կարգավորման միջոցով:
Մարդու իրավունքներ	Մարդկային վարքագծի որոշակի կանոններ սահմանող բարոյական սկզբունքներ, որոնք, որպես հիմնարար իրավունքներ, մշտապես պաշտպան-

	վում են ներպետական և միջազգային իրավունքում: Մարդու իրավունքներով օժտված են բոլոր մարդիկ, որպես համընդհանուր (ամենուր կիրառելի) և հավասար (միևնույնը բոլորի համար) հիմունքներով:
Մեղադրել	Որևէ իրավիճակի կամ պատահարի համար որևէ մեկին պատասխանատու ճանաչել:
Մեմ	Մեմերը սոցիալական երևույթ են, որոնք, ինչպես գեները, զարգանում են ժամանակի ընթացքում բնական ընտրության միջոցով: Կոռուպցիան շատ հաջողված մեմ է: Այս հայեցակարգը զարգացրել է Ռիչարդ Դոուկինսը:
Մենաշնորհ	Մենաշնորհն առաջանում է այն դեպքում, երբ կոնկրետ անձը կամ կազմակերպությունը հանդիսանում է որոշակի ապրանքի կամ ծառայության միակ մատակարարը: Մենաշնորհները բնութագրվում են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ոլորտում տնտեսական մրցակցության և մրցունակ ապրանքների բացակայությամբ:
Մերիտոկրատիա	Կազմակերպության, հանրային կառավարման կամ կառավարության համակարգ, ըստ որի լիազորությունները պետք է տրվեն անձանց արժանիքի սկզբունքի հիման վրա:
Մշակութային բազմազանություն	Մարդկային հասարակությունների կամ մշակույթների բազմազանությունը տվյալ տարածաշրջանում կամ ողջ աշխարհում:

<p>Մոնիտորինգ (մշտադիտարկում)</p>	<p>Մոնիտորինգը գործընթաց է, որի միջոցով գնահատվում է ծրագրի կամ ծառայության իրականացումը դրանց՝ պլանի (պայմանագրի, բյուջեի, քանակական ցուցանիշների և այլնի) համաձայն կատարումը ստուգելու նպատակով: Սովորաբար համեմատվում են պլանավորված և փաստացի արդյունքները կատարված գործունեության և արդյունքների մակարդակում: Սա նշանակում է պլանավորվածին համապատասխան կատարված գործողությունների և արդյունքների, ինչպես նաև նպատակների իրականացման կրկնակի ստուգում:</p>
<p>Մրցակցային տարբերվող օղակ</p>	<p>Կազմակերպություն, որը փորձում է մրցակցության դաշտ մտնել, առանձնացնելով իր ապրանքները, ծառայությունները և ապրանքանիշերը մրցակիցների արտադրանքից: Բարեվարքության համատեքստում կազմակերպությունը կարող է առանձնանալ որպես բարեխղճորեն գործող կազմակերպություն, ի տարբերություն այլ կազմակերպությունների, որոնք հանդուրժում են կոռուպցիոն դրսևորումները:</p>
<p>Յուրացում</p>	<p>Ապրանքների՝ սեփական շահերին ապօրինի ծառայեցնելը կամ խարդախությամբ գույքին տիրանալը:</p>
<p>Նեպոտիզմ</p>	<p>Ընկերների և բարեկամների նկատմամբ բարեհաճ վերաբերմունք՝ պաշտոնների նշանակման, ծառայողական առաջխաղացման, ծառայությունների մատուց-</p>

	ման և այլ գործընթացներում:
Ներքևից վերև մոտեցում	Հասարակության մասնակցությունը բարեփոխումների նախաձեռնման և փոփոխման գործընթացում՝ հաճախ, բայց ոչ միշտ կառավարության հետ համատեղ: Կազմակերպությունում առաջնորդության ձև, որտեղ աշխատակիցները իրավասու են մասնակցել որոշումների կայացմանը և ընդհանուր առմամբ կազմակերպչական կյանքին:
Նյութական ակտիվներ	Նյութական ակտիվները տեսանելի են, շոշափելի և ֆիզիկապես չափելի (օրինակ՝ գույք, սարքավորում, առձեռն գումար և այլ ֆինանսական գործիքներ):
Նշանակել	Որևէ մեկին աշխատանքի ընդունել:
Նորմատիվ ուսուցում	Ուսուցման տեսակ, որը հիմնականում ճանաչողական է, այսինքն՝ նյութը յուրացվում է հիշողության, դատողության և այլ ճանաչողական գործընթացների միջոցով: Բարեվարքության և հակակոռուպցիոն գործունեության համատեքստում նորմատիվ ուսուցումը դիտարկում է ազգային և միջազգային օրենսդրությունը և ինստիտուցիոնալ մեխանիզմները (ներառյալ պետության, քաղաքացիական հասարակության և բիզնես կազմակերպությունների), ինչպես նաև առանցքային հայեցակարգերը և գերակայող մոտեցումները:
Նպատակների ծառ	Նպատակների հիերարխիկ սխեմա, որոնք ուղեկցվում են գործողություններով և արդյունքներով՝ հիմնվելով

	տրամաբանական կառուցվածքի մոտեցման վրա:
Շահագործել	Անարդար կերպով օգուտ քաղել ուրիշի աշխատանքից:
Շահագրգիռ խումբ	Մարդկանց մասնավոր խումբ, ովքեր ներկայացնում են հիմնականում պետական քաղաքականությունների հետ կապված տեսակետներ, և սովորաբար աջակցում են կառավարության կողմից դրանց ընդունմանը:
Շահառու	<p>Շահառուները «հետաքրքրված կողմեր» են, այսինքն՝ մարդիկ կամ կազմակերպություններ, որոնք ուղղակիորեն և/կամ անուղղակիորեն կրում են կազմակերպության կողմից կայացված որոշումների և իրականացվող գործողությունների ուղղության ազդեցությունը: Այն կարող է լինել նաև անձ, խումբ կամ ինստիտուտ, որը կրում է ազդեցություն կամ ազդում է կազմակերպության վրա՝ ունենալով կամ չունենալով ուղղակի օրինական (կորպորատիվ) իրավունքներ:</p> <p>Հիմնականում շահառուներն այն անձինք են, որոնց շարունակական մասնակցությունը համարվում է բացարձակապես անհրաժեշտ հանգամանք կազմակերպության գործունեության համար: Նրանք կամ ուղղակիորեն օգուտ են քաղում կազմակերպության արտադրանքից և/կամ մատուցած ծառայություններից, կամ ուղղակիորեն ընդգրկվում են:</p>

	ված են դրանց մատուցման գործընթացում: Երկրորդական շահառուները չեն համարվում բացարձակապես անհրաժեշտ կազմակերպության գործունեության համար: Նրանք, այնուամենայնիվ, կարող են նշանակալի ազդեցություն ունենալ դրա արդյունավետության վրա: Նույնիսկ հեռավոր շահառուները կարող են ազդեցություն ունենալ, հարցականի տակ դնելով կազմակերպության օրինականությունը և գոյության իրավունքը:
Շահառուների տեսություն	Տեսություն, որի համաձայն կազմակերպությունը պետք է հաշվի առնի բոլոր շահառուների շահերը իր գործունեության իրականացման ժամանակ:
Շահառուների քարտեզագրում	Սա հիմնական շահառուների նույնականացման և առաջնահերթ շահառուների սահմանման գործընթաց է, որը հիմնված է Ձեր կազմակերպության համար նրանց կարևորության և նրանց համար Ձեր կազմակերպության կարևորության վրա:
Շահերի բախում	Վստահություն ներշնչող պաշտոն ունեցող անձի մասնավոր շահերի և պաշտոնական պարտականությունների միջև բախում: Հարկ է նշել, որ պաշտոնատար անձը կամ հանրային ծառայողը կարող են ունենալ շահերի բախում, ինչը սակայն չի նշանակում, որ նա պարտադիր պետք է ազատվի իր պարտականությունների կատարումից: Նախ և

	<p>առաջ, պաշտոնատար անձը/հանրային ծառայողը պետք է հայտարարի շահերի բախման առկայության մասին, իսկ նրա գործընկերներն ընդունված ընթացակարգերի հիման վրա պետք է որոշեն, թե արդյո՞ք առկա է տվյալ գործողության շրջանակներում հատուկ գործընթացի միջոցով նրան պաշտոնական պարտականությունների կատարումից ազատելու անհրաժեշտություն թե հնարավոր է նրա մասնակցությունը այդ գործողությանը, հաշվի առնելով կողմնակալության դրսևորման վերաբերյալ մտահոգությունը: Օրինակ, եթե կազմակերպության բարձրաստիճան պաշտոնյան օգտագործում է իր դիրքը բարեկամի կամ ընկերոջ ծառայողական կարիերան խթանելու համար, ապա սա նշանակում է նրա կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորում շահերի բախման առումով: Սակայն, եթե նույն պաշտոնյան գոյություն ունեցող իրավական գործընթացում իր բարեկամի կամ ընկերոջ անունը որևէ ցանկում ներառում է, բացառելով իր մասնակցությունը որոշում կայացնելու գործընթացում, ապա շահերի բախման տեսանկյունից դա դեռևս չի նշանակում անհարիր վարքագիծ:</p>
<p>Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող</p>	<p>Կազմակերպություններ, որոնց օրենքով արգելված է հավելյալ եկամուտներ տրամադրել անհատներին: Նրանք հա-</p>

կազմակերպություններ	Ճախ ունեն սոցիալական նպատակներ, աշխատում են ելնելով հանրային շահերից: Դրանք կոչվում են նաև ոչ կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ-ներ) և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ-ներ):
Հակակոռուպցիոն գործակալություն	Գործակալություն, որը մասնագիտացած է կոռուպցիայի դեմ պայքարում: Այն կարող է հանդիսանալ ոստիկանության կամ իրավակիրառ մարմնի մաս, սակայն կարող է գործել նաև բոլոր պետական մարմիններից կամ դրանց մի մասից անկախ:
Հակաօրինական գործողություններ	Ապօրինի, անհարիր կամ ոչ մասնագիտական վարքագիծ:
Համագործակցություն հանրային և մասնավոր սեկտորի միջև	Համագործակցության վրա հիմնված կամ համատեղ ձեռնարկություն հանրային և մասնավոր սեկտորի երկու կամ ավելի կողմերի միջև, որը խարսխված է յուրաքանչյուր գործընկերոջ ուժեղ կողմերի և մասնագիտացվածության վրա:
Համայնքում բարեվարքության կառուցում (ՀԲԿ)	Գործընթաց, որի միջոցով համայնքները, հաճախ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների (ՇՄՆՉԿ) կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) աջակցությամբ, աշխատում են տեղական համայնքներում առկա ծառայությունների մատուցման և տեղական իշխանությունների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ,

	<p>հիմնականում տեղական իշխանությունների հետ համագործակցության միջոցով: Համայնքում բարեվարքության կառուցման (ՀԲԿ) գործընթացը սկսվում է ընդգրկվելիք տարածքի հստակեցմամբ, որին հետևում է տեղական իշխանությունների և քաղաքացիների, որպես մոնիտորինգ իրականացնողների, համատեղ ուսուցումը, փաստափաթեթի աշխատանքը, քաղաքացիների և բիզնես կազմակերպությունների կամ ծառայություններ մատուցողների ներգրավման ապահովումը, և ավարտվում շղթայի փակմամբ, որն իրականացվում է շահառուների կողմից հետադարձ կապի ապահովմամբ և նախապես վեր հանված հարցերի լուծմամբ: ՀԲԿ-ի գործընթացները, գործիքները և մեխանիզմները հանդիսանում են սոցիալական հաշվետվողականության բաղադրիչ, որը շեշտադրում է խնդիրների լուծման և շղթայի փակման կարևորությունը շահառուների համար: ՀԲԿ-ը, որպես կանոն, բնութագրվում է արդյունավետ լուծումների բարձր մակարդակով:</p>
<p>Համապատասխանության հետ կապված մոտեցում</p>	<p>Համապատասխանության հետ կապված մոտեցումը միտված է նվազեցնել կոռուպցիայի մակարդակը և/կամ լուծել բարեվարքության կամ էթիկայի հետ կապված մարտահրավերները: Այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով:</p>

	<ul style="list-style-type: none"> • հիմնված է կանոնների վրա • հիմնականում կենտրոնացած է կանոնների և ընթացակարգերի կիրառման վրա • մրցակցային է. բացահայտում, դատապարտում և դատավարություն • կենտրոնացած է խնդիրների վրա • ունի հայեցողության ցածր մակարդակ • Համապատասխանության հետ կապված մոտեցումը կարող է իրականացվել վերևից ներքև կամ ներքևից վերև. • Համապատասխանության հետ կապված մոտեցումը տարբերվում է բարեվարքության հետ կապված մոտեցումից:
Համապատասխանություն	<p>Օրենքների, կարգավորումների, հանձնարարականների, ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և պայմանագրերի պահանջներին ու ցուցումներին համապատասխան գործունեություն:</p>
Համատեղ ուսուցում	<p>Համայնքում բարեվարքության կառուցման (ՀԲԿ) գործընթացի երկրորդ փուլը, որի ընթացքում համայնքում մշտադիտարկում իրականացնողները նույնականացվում և վերապատրաստվում են տվյալների հավաքագրման թեմայի շրջանակներում, կազմվում են տարաբնույթ շահառուներից բաղկացած համատեղ աշխատանքային խմբեր և ընտրվում են մշտադիտարկման ենթակա զարգացման ծրագրերը:</p>
Համատեքստի	<p>Համայնքում բարեվարքության կառուց-</p>

զգայունություն	ման առաջին փուլն է, որի ընթացքում ուսումնասիրվում են համատեքստը և շահառուները: Այն ներառում է շահառուների վերաբերյալ վերլուծությունը, համայնքի մասնակցությունը և բազային տեղեկատվության ձևավորումը, ինչպես նաև պոտենցիալ սփոյլերների վերաբերյալ վերլուծությունը:
Հայեցողություն	Որոշում ընդունելու լիազորություն:
Հանրային բարիք	Հանրության շահ կամ բարեկեցություն
Հանրային գնումներ	Պետական մարմինների կողմից ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթաց:
Հանրային լսումներ	Հանրային լսումները քաղաքացիների և տեղական մարմինների (կենտրոնական կառավարության ներկայացուցիչների) միջև հանդիպումներն են, որտեղ համայնքի բնակիչների համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը դրվում են քննարկման: Այն սովորաբար հանդիսանում է տեղական համայնքի պահանջ, և նրանց կողմից այդպիսի պահանջը պետք է խրախուսվի տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպության (ԲՀԿ) կողմից, որն աշխատում է նրանց հետ:
Հանրային քաղաքակա- նություն	Կառավարության և ողջ հասարակության համար նշանակություն ունեցող սկզբունքներ և չափանիշներ:
Հանցագործության մասին	Անձ, սովորաբար աշխատակից, ով հայտնում է դեկավարությանը, ԶԼՄ-նե-

հայտնող	րին կամ հանրությանը կազմակերպության ներսում տեղի ունեցող ոչ օրինական գործողությունների մասին:
Հանցագործության մասին հայտնողների թեժ գիծ	Կոռուպցիոն վարքագծի հետ կապված տեղեկատվության ձեռք բերմանն ուղղված հեռախոսային գիծ կամ կայք, որն առավել հաճախ ստացվում է կազմակերպության աշխատակցի կողմից: Այն հաճախ գաղտնիության և անանունության պահպանման միջոց է հանդիսանում:
Հարգանք իրավունքների նկատմամբ	Որևէ մեկին իրավունքներ վերապահելը կամ դրանց ճանաչումը:
Հաշվետվողականություն	Հաշվետվողականությունը հանդիսանում է բարեվարքության հիմնական տարրերից մեկը: Այն շահառուներին հնարավորություն է տալիս ստուգելու Ձեր կողմից նախապես նշված կամ ենթադրյալ գործողությունների կատարումը: Այն նշանակում է հաշվետու, պարտավոր և պատասխանատու լինելու կարգավիճակ, համարվում է պահանջ հանրային ծառայողների, ընկերությունների պաշտոնյաների և տնօրենների, կառավարիչների և աշխատողների համար: Օրինակ՝ հանրային ծառայողները, կառավարիչները և այլ մասնագետները պատասխանատու են բաժնետերերի, սպառողների, հաճախորդների, ողջ հանրության առջև և այլն: Ավելին, այլ խմբերը նույնպես կա-

	<p>րող են պատասխանատու համարվել, օրինակ՝ ուսանողները, ովքեր պատասխանատու են իրենց դասախոսների առջև, ինչպես նաև դասախոսները՝ իրենց ուսանողների առջև: Բարեվարքության ազգային համակարգի շրջանակում կարելի է տարբերակել հորիզոնական, ուղղահայաց և անկյունազծային հաշվետվողականություն:</p> <p>Հաշվետվողականության բոլոր երեք տեսակները էական են Բարեվարքության ազգային համակարգի արդյունավետ կենսագործունեության համար, առնվազն բաց ժողովրդավարական հասարակության մեջ: Հիրավի, հասարակության բաց լինելու հանգամանքը մասամբ հիմնված է հաշվետվողականության այդ բոլոր երեք տեսակների արդյունավետ իրականացման վրա: Հաշվետվողականության արդյունավետ իրագործման համար հաճախ պահանջվում է թափանցիկություն:</p>
<p>Հաշվետվություն չներկայացնելը</p>	<p>Ղեկավարությանը որևէ բանի, հատկապես կատարված սխալ գործողությունների մասին զեկուցելու պարտականության կատարման մեջ թերացում:</p>
<p>Հավասարություն</p>	<p>Հավասար լինելը՝ հատկապես կարգավիճակի, իրավունքների, պարտականությունների կամ հնարավորությունների առումով:</p>
<p>Հետևանք</p>	<p>Կարգավիճակ կամ իրավիճակ, որն առկա է հատուկ գործողությունների և</p>

	արդյունքների փաստացի իրականացման շնորհիվ:
Հետևողականություն	Համապատասխանություն կազմակերպության կողմից ընդունված/հռչակված ծրագրի և դրա իրական գործելակերպի միջև: Սա նաև նշանակում է համապատասխանություն կազմակերպության կողմից կարևոր համարվող վարքագծի և իր իսկ կողմից այդ վարքագծի գործնական կիրառման միջև: Այն կարելի է նկարագրել որպես «կազմակերպչական ամբողջականություն» այն իմաստով, որ կազմակերպության աշխատակազմի ուշադրության կենտրոնում է գտնվում ընդհանուր նպատակը: Ձեր կազմակերպության բաղկացուցիչ մասերը «ի մի են բերվում» որպես մի ամբողջություն, որը սևեռված է իր նպատակների վրա: Դեկլարարության և աշխատակազմի ցուցաբերած վարքագիծը խթանում է կազմակերպության զարգացումը: Սա նաև ցույց է տալիս ձեր կազմակերպության կողմից իր գործունեության համակարգման աստիճանը, որի արդյունքում դրա բաղկացուցիչ տարբեր մասերը ներկայանում են որպես ամբողջական, միասնական ճակատ մյուսների համար և աշխատում են համատեղ իրենց ռազմավարության իրականացման ու նպատակներն հասնելու ուղղությամբ:
Հիերարխիա	Պաշտոնական բյուրոկրատական կազմակերպությունների (կառավարություն

	կամ այլ բյուրոկրատական կազմակերպությունների) կառուցվածքային հատկանիշ, հատակ սահմանված ուղղահայաց «հրահանգային շղթա», որում յուրաքանչյուր օղակ ենթակա է վերին օղակին և գերակա է ստորին օղակի նկատմամբ:
Հիմնախնդրի վրա հիմնված ուսուցում	Իրական, չլուծված իրավիճակների հետ աշխատանք: Ցանկալի է, որ դրանք վերցված լինեն համապատասխան անձանց աշխատավայրի (կամ անձնական կյանքի) հետ կապված փորձից: Խնդիրները պետք է օգտագործվեն որպես ստացած գիտելիքը և հայեցակարգերը ստուգելու, ինչպես նաև կենսունակ լուծումներ առաջարկելու հնտություններ զարգացնելու հնարավորություն:
Հիմնախնդիրների ծառ	Հիմնախնդիրների ծառը համակարգում է մտքի գրոհի ընթացքում վեր հանված հիմնախնդիրները, որն է կազմակերպության կամ համայնքի հետաքրքրությունների դաշտի որոշակի խնդրի պատճառի և հետևանքի տեսանկյունից:
Հնագանդ	Այլ անձի կամ ավելի բարձր ուժի կամքի հետ համաձայնվելու ցանկություն ունենալու առանձնահատկություն:
Հոգաբարձուների խորհուրդ	Նշանակված կամ ընտրված խորհուրդ, որը խթանում կամ երաշխավորում է հանրային կամ մասնավոր կազմակերպության (օրինակ, հիմնադրամի կամ բարեգործական կազմակերպության) գործունեությունը:
Հոգեշարժա-	Աջակցություն ուղանողներին ինչպես

<p>կան ուսուցում/վարքագծային ուսուցում</p>	<p>վերլուծական, այնպես էլ պրակտիկ նոր հմտությունների ձեռքբերման հարցում, որոնք նրանք կարող են ֆիզիկապես և իրականում օգտագործել բարեվարքության հետ կապված մարտահրավերները հաղթահարելիս: Այն հանդիսանում է Բենյամին Բլումի կողմից սահմանված ուսուցման երեք ձևերից մեկը, մյուս երկու ձևը Ջգացմունքային և Իմացական ուսուցումներն են:</p>
<p>Հովանավորչություն</p>	<p>Կազմակերպության կամ անհատի կողմից մեկ այլ անձին օժանդակելը, խրախուսելը, արտոնություն կամ ֆինանսական աջակցություն տրամադրելը: Այն հաճախ օգտագործվում է քաղաքական հովանավորչությունը նկարագրելու համար, որի ընթացքում քաղաքացիները պետական ռեսուրսների հաշվին պարգևատրվում են ընտրական գործընթացներում ցուցաբերած օգնության համար: Այս եզրույթը կարող է նաև համարվել կոռուպցիայի կամ ֆավորիտիզմի տեսակ, երբ իշխանական կուսակցությունը պարգևատրում է խմբերի, ընտանիքների, էթնիկ խմբի և այլ անձանց՝ ընտրություններում նրանց ցուցաբերած աջակցության համար՝ ապօրինի նվերների տրամադրման կամ խաբեությամբ պաշտոններում նշանակումներ կատարելու կամ կառավարության հետ պայմանագրերի կնքման միջոցով:</p>
<p>Հորիզոնական</p>	<p>Հաշվետվողականության այս տեսակը</p>

<p>հաշվետվողականություն</p>	<p>դրսևորվում է պետության մեջ պաշտոնական հարաբերություններում, երբ մի պետական մարմին իրավասու է բացատրություն պահանջել կամ տույժի ենթարկել մեկ այլ պետական մարմնի: Խոսքը ներքին ստուգումների և վերահսկողական գործընթացների մասին է: Օրինակ, պետության գլուխը իր որոշումների առումով պատասխանատու է օրենսդիր մարմնի առջև, և որոշ դեպքերում դրանք կարող են չեղյալ համարվել կամ պատժամիջոցի ենթարկվել ընթացակարգային խախտումների համար: Հորիզոնական հաշվետվությունը համարվում է «Բարեվարքության ազգային համակարգի» գծագրի սյուներից մեկը:</p>
<p>Ոչ լրարժեք տեղեկատվություն</p>	<p>Խնդրի կամ իրավիճակի հետ կապված մանրամասներ, որոնք չեն տրամադրվել կամ հասանելի չեն:</p>
<p>Ոչ նյութական ակտիվներ</p>	<p>Նույնականացվող, ոչ դրամական ակտիվներ, որոնք տեսանելի, շոշափելի կամ ֆիզիկապես չափման ենթակա չեն: Դրանք ստեղծված են որպես ժամանակի և/կամ ջանքերի արդյունք և համարվում են նույնականացման ենթակա առանձին ակտիվներ:</p>
<p>Ոչ պատշաճ վարքագիծ</p>	<p>Անհամապատասխան կամ անընդունելի վարք:</p>
<p>Որոշումների ծառ</p>	<p>Վերլուծական ոճ, որը մշակում է բազմազան հնարավոր գործողություններ, որոնք հանգեցնում են հատուկ արդ-</p>

	յունքների, հաշվի առնելով յուրաքանչ-յուր գործողության դեպքում հնարավոր ռիսկերը: Այս գործիքը հիմնականում օգտագործվում է կառավարիչների և որոշում կայացնողների կողմից:
Չարաշահել	Իշխանությունն ու պարտականությունը չարաշահելը (օրինակ՝ կապված պայմանագրի, պաշտոնական գործառույթի կամ դիրքի հետ):
Չարաշահում	Հաստատության կամ անձի նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունք, հաճախ անարդար կամ ոչ պատշաճ կերպով շահ ստանալու ակնկալիքով:
Չեզոքություն	Կողմնակալության բացակայություն:
Պաշտոնական գործառույթի չարաշահում	Պաշտոնական գործառույթի կատարման թերացում գործակալի (հանրային ծառայող, մասնավոր անձ) կողմից՝ չարդարացված առավելության հասնելու նպատակով:
Պաշտոնական դիրքի չարաշահում	Ի պաշտոնե ապօրինի գործողության կատարում, որը բացասաբար է անդրադառնում պաշտոնական պարտականությունների լիարժեք իրականացման վրա:
Պատասխանատվություն	Արժանահավատության ձև, որն է բանի համար որևէ մեկին պատասխանատու լինելու կամ որևէ մեկի վարքագծի համար պատասխանատու լինելու առանձնահատկություն:
Պատշաճ գործընթաց	Վերաբերում է բոլոր ճիշտ ընթացակարգերին և կարգավորումներին, որոնց անհրաժեշտ է հետևել վիճահա-

	<p>րույց իրավիճակում, ինչն ապահովում է խնդրահարույց վիճակում գտնվող անձի նկատմամբ արդար և անկողմնակալ վերաբերմունքը:</p>
<p>Պատշաճ ջանասիրություն</p>	<p>Անձի կողմից կանոնների և ընթացակարգերի լիակատար պահպանում որևէ գործունեություն իրականացնելու ընթացքում:</p> <p>Կազմակերպության կամ անհատի ուսումնասիրություն, հետազոտություն կամ վերլուծություն նախքան նրանց հետ պայմանագրային, գործարքային կամ այլ գործունեության նախաձեռնումը:</p>
<p>Պատվիրակում</p>	<p>Ուրիշներին առաջադրանքներ տալը: Կառավարության կողմից պատվիրակումը նշանակում է. «Հստակ սահմանված խնդիրների առումով կառավարության՝ որոշումներ կայացնելու և վարչական լիազորության փոխանցումը կազմակերպություններին կամ ընկերություններին, որոնք գտնվում նրա անուղակի վերահսկողության տակ կամ անկախ են»: Հիմնականում պատվիրակումն իրականացվում է կենտրոնական իշխանության կողմից կիսաինքնավար կազմակերպություններին, որոնք ամբողջապես չեն վերահսկվում կառավարության կողմից, բայց իրավական առումով հաշվետու են նրան:</p>
<p>Պատվիրատու</p>	<p>Այլ անձի իր անունից որպես կատարող հանդես գալու լիազորություն տվող</p>

	անձ (տես Պատվիրատու-կատարող խնդիրը):
Պատվիրատու-կատարող խնդիր	Հիմնականում դա վերաբերում է մի կողմին համոզելու դժվարություններին՝ գործել իր շահերից տարբերվող շահերից ելնելով: Այն հաճախ հիմնված է տեղեկատվական անհամաչափության վրա: Այդպիսի օրինակ է կառավարիչը (պատվիրատու), ով ուղարկում է կատարողին քաղաքացիներից հարկերը հավաքելու: Պատվիրատուի շահերից բխում է հարկերի հավաքումը: Կատարողի շահերից ևս բխում է հարկերի հավաքումը, սակայն նա կարող է նաև հետաքրքրված լինել որոշ գործարքներից անձնական ֆինանսական օգուտ ստանալու մեջ: Կատարողը որոշում է միջինից ցածր հարկային դրույք սահմանել, սպասվածից ավելի քիչ վճարած քաղաքացուց ստանալով կաշառք: Տեղեկատվության անհամաչափության արդյունքում պատվիրատուն տեղյակ չի լինում ինչպես ցածր հարկադրույքի, այնպես էլ կատարողի ստացած կաշառքի մասին:
Պարզևատրում կատարած աշխատանքի համար	Աշխատավարձի ավելացում՝ կապված կատարված աշխատանքի որակի փաստացի բարելավման հետ:
Պարզություն	Պարզ, հստակ, թափանցիկ լինելը:
Պարտականություն	Պայմանագրով, օրենքի կամ էթիկայի նորմերի հիման վրա ստանձնած պար-

	տավոթություն, որի համաձայն անհրաժեշտ է դրսևորել որոշակի չափանիշներին համապատասխան վարքագիծ կամ գործել որոշակի ձևով:
Պարտական	Կատարված իրավախախտման մասին ճշմարտությունը մարդկանցից թաքցնելու փորձ:
Պարտքի գգացումից ավելին	Պահանջվածից ավելին կատարելը:
«Պետության գավթում»	Անհատների, խմբերի կամ կազմակերպությունների գործողություններ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտներում, որը նպատակ ունի ազդել օրենքների, կարգավորումների, որոշումների և կառավարության այլ քաղաքականությունների ձևավորման վրա՝ ելնելով իրենց շահերից, որը ծագում է մասնավոր օգուտները հանրային պաշտոնյաներին ոչ իրավական եղանակով փոխանցման արդյունքում:
Պետության համար արդարացման պատճառ	Այս եզրույթն օգտագործվում է հիմնականում կառավարությունների կողմից ենթադրյալ պետական կարիքների հիմքով արդարացնելու համար ձեռնարկված քաղաքական միջոցառումները, որոնք կարող են ներառել իրավունքների կամ բարոյական նորմերի խախտումներ, կամ չկատարված գործողությունները, ինչպիսիք են տեղեկատվության թաքցնելը հանրությունից: Հաճախ, հանրությունը տեղեկացված չէ կառավարության գործողությունների կամ

	անգործության հատուկ պատճառների մասին:
Պրոֆեսիոնալիզմ	Կրթության և վերապատրաստման չափանիշներ, որոնք մասնագետներին տալիս են որոշակի գիտելիքներ և հմտություններ այդ մասնագիտությամբ նրանց տրված դերակատարումն իրականացնելու համար: Ի լրումն, պրոֆեսիոնալների մեծ մասը ենթակվում է հստակ վարքագծի կանոնների, որոնք սահմանում են խիստ էթիկական և բարոյական պարտավորություններ: Որոշակի ոլորտի պրակտիկայի և էթիկայի պրոֆեսիոնալ չափանիշները սովորաբար սահմանվում և պահպանվում են լայն ճանաչում ունեցող մասնագիտական ասոցիացիաների կողմից:
Ռազմավարական միջամտություններ	Մոցիալական հաշվետվողականության փորձագետ Ջոնսթան Ֆոքսը սահմանում է ռազմավարական միջամտությունները որպես փոփոխություն կատարելու տեսության վերաբերյալ մոտեցում, որը հաշվի է առնում ողջ պատճառահետևանքային շղթան, օրինակ՝ գնման գործընթացում կամ քաղաքականության վերաբերյալ որոշման գործում: Համայնքներում բարեվարքության կառուցումը ռազմավարական միջամտության օրինակ է:
Ռազմավարական պլանավորում	Կազմակերպության նպատակների և կարողությունների համապատասխանեցումը շրջակա միջավայրի պահանջներ:

	րին՝ նպատակ ունենալով մշակել գործողությունների պլան, որը կապահովի նպատակների իրականացումը:
Ռ-ասիզմ	Կարծիք, համաձայն որի մարդկային ռասսաների միջև տարբերությունները մշակութային կամ անհատական նվաճումներ են: Այն սովորաբար ներառում է այն գաղափարը, որ մի ռասսան գերակա է մյուսների նկատմամբ:
Ռ-ացիոնալացում	Ոչ ռացիոնալ միջոցներով վարքագծի արդարացում:
«Ռեսուրսային աղետ»	Սա կապված է այն պարադոքսի հետ, որ բազմաթիվ բնական ռեսուրսներ (հատկապես նավթ, գազ և հանքային նյութեր) ունեցող երկրներում առկա է միտում ունենալ ավելի ցածր տնտեսական աճ, աղքատության և անհավասարության ավելի բարձր ցուցանիշ և ավելի վատ կառավարում քան ավելի քիչ օգտակար հանածոներ ունեցող երկրներում: Այս իրողությունից հայտնի բացառություններ են Նորվեգիան ու Կանադան, իսկ Նիգերիան և Անգոլան համարվում են դրա վառ օրինակ:
Ռիսկային շրջահայացություն	Ռիսկերի նկատմամբ զգուշություն
Ռիսկերի կառավարում	Կազմակերպության համար ռիսկերի պոտենցիալ աղբյուրների վեր հանման ընթացակարգ, որն ուղղված է բացասական հետևանքների գնահատմանը և դրանց նվազեցմանը:

Սեռական խտրականություն	Հակառակ սեռի անդամների նկատմամբ խտրականության ձև:
Սեփական շահ	Հնարավորությունից օգուտ քաղելը՝ առանց հաշվի առնելու մյուսների համար առաջացող հետևանքները
Սոցիալական արդարություն	Սոցիալական արդարությունը մարդկանց համար իրական վիճակ է հավասար վերաբերմունքի արժանանալու և իրականացնելու իրենց պոտենցիալն այն հասարակությունում, որտեղ նրանք ապրում են: Սոցիալական արդարության նպատակը ընդհանուր առմամբ համընկնում է մարդկային զարգացման նպատակին, և համապատասխան ինստիտուտները սովորաբար մեծ նշանակություն են տալիս կրթությանը, առողջության պահպանմանը, սոցիալական անվտանգությանը, աշխատանքային իրավունքներին, ինչպես նաև հանրային ծառայությունների լայն համակարգին, առաջընթացային հարկային համակարգին և շուկաների կարգավորմանը՝ ապահովելու համար հարստության արդարացի բաշխումը, հնարավորությունների հավասարությունը և արդյունքի ոչ մեծ անհավասարությունը:
Սոցիալական աուդիտ	Սոցիալական աուդիտները հանդիպումներ են քաղաքացիների և տեղական մարմինների (կամ կենտրոնական կառավարության ներկայացուցիչների) միջև, որոնց ընթացքում հանրության

	<p>կողմից դիտարկվում են բյուջեները, ծախսերը, պայմանագրերը, քանակի և զբաղվածության վերաբերյալ փաստաթղթերը, հաստատելու համար այն հանգամանքը, որ չկան հակասություններ կամ խախտումներ կապված կառավարության մարմնի կողմից իրականացված որոշակի ծրագրի հետ: Այն կարող է ներառվել որևէ տեղական ծրագրի ընթացիկ ընթացակարգերում կամ կարող է լինել համայնքի կողմից պահանջվող կամ իրականացվող գործընթաց: Այն սովորաբար տեղի է ունենում որոշակի ծրագրի ավարտին և հաճախ գեկուցվում է հանրային լսումների ժամանակ:</p>
<p>Սոցիալական կապիտալ</p>	<p>1. Կազմակերպության ոչ նյութական արժեք, որը ներառում է ծառայողների և աշխատակիցների սոցիալական և միջանձնային հմտությունները 2. Եզրույթ, որը վերաբերում է անհատի ցանցերին և կապերին, որոնք թույլ են տալիս նրան ստանալ շահ կամ հնարավորություններ 3. Լայն իմաստով՝ եզրույթ, որը նշանակում է հասարակության սոցիալական դերակատարների կողմից ձևավորված ցանցեր և հարաբերություններ, որոնք տրամադրում են միմյանց նյութական և ոչ նյութական արժեք:</p>
<p>Սոցիալական հաշվետվողականություն</p>	<p>Սա վերաբերում է քաղաքացիների, ՔՀԿ-ների և ոչ պետական սուբյեկտների՝ կառավարության հետ աշխատելու</p>

	<p>կարողությունների ուժեղացման գործընթացին՝ նպատակ ունենալով ապահովել նրանց հաշվետղողականությունն ու պատասխանատվությունը տարբեր իրավասու մարմինների կողմից ընդունված, բայց հաճախ ոչ պատշաճ կիրառված օրենքներն ու կարգավորումներն իրականացնելիս: Այն նաև նշանակում է պետությունների խրախուսում՝ ամբողջովին թափանցիկ և քաղաքացիների կարիքներին արձագանքող լինելու առումով: Համայնքներում բարելավքության կառուցումը սոցիալական հաշվետղողականության տեսակ է: Սոցիալական հաշվետղողականությանն ուղղված գործողությունների արդյունավետությունը մասամբ կարող է գնահատվել լուծված խնդիրների մակարդակով:</p>
<p>Սոցիալական հավասարություն</p>	<p>Հարաբերությունների սոցիալական վիճակ, որում բոլոր մարդիկ կոնկրետ հասարակության կամ մեկուսացված խմբի շրջանակներում որոշակի առումով ունեն նույն կարգավիճակը:</p>
<p>Սոցիալական պատասխանատվություն</p>	<p>Սոցիալական պատասխանատվությունը էթիկայի տեսություն է, համաձայն որի կազմակերպությունը կամ անհատը լայն առումով պարտավոր է գործել ի շահ հասարակության: Սոցիալական պատասխանատվությունը յուրաքանչյուր անձի պարտականությունն է՝ ուղղված տնտեսության և էկոհամակարգերի միջև հավասարակշռության պահպան-</p>

	<p>մանր: Այն վերաբերում է ոչ միայն բիզնես կազմակերպություններին, այլև յուրաքանչյուր անձի, ում գործողությունները ազդում են շրջակա միջավայրի վրա: Այս պատասխանատվությունը կարող է լինել պասիվ, խուսափելով ընդգրկվել սոցիալական առումով վնասակար գործունեության մեջ, կամ ակտիվ՝ իրականացնելով ուղղակիորեն սոցիալական նպատակներն առաջ մղելուն ուղղված գործունեություն:</p>
<p>Սոցիալապես պատասխանատու ներդրում</p>	<p>Ներդրում կատարելու մոտեցում կամ ռազմավարություն, որը վեր է դասում որոշակի սոցիալական նպատակները շահութաբերությունից: Սոցիալական նպատակները կարող են ներառել տարբեր սոցիալական, շրջակա միջավայրի հետ կապված, էթիկական կամ այլ հարցեր: Ներդրողները նպատակ ունեն նպաստել կամ պահպանել դրանք:</p>
<p>Սպառնալիք</p>	<p>Ցավ պատճառելու կամ թշնամական գործողություն կատարելու մտադրության վերաբերյալ հայտարարություն</p>
<p>Սպիտակ ցուցակ</p>	<p>Կազմակերպությունների (հաճախ ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող) ցանկ, որոնք նշվել են որպես անցյալում բարեխիղճ վարքագիծ դրսևորած կազմակերպություն, ունեն լավ համակարգեր և գործընթացներ, և հետևաբար, նրանց կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումն ապագայում</p>

	պետք է լինի թույլատրելի և խրախուսելի:
Ստել	Ճշմարտությունը չասելը:
Սփոյլերներ	Անհատներ կամ խմբեր, որոնք ակտիվորեն աշխատում են խաթարել բարեփոխումները կամ պատշաճ համապատասխանությունը նորմերին և կանոնակարգերին:
Սև ցուցակ	Կազմակերպությունների, հաճախ՝ ապրանքների և ծառայությունների մատակարարների ցանկ, որոնց գործողություններում անցյալում նկատվել են թերացումներ բարեվարքության առումով, և որոնց չպետք է թույլատրել ապրանքներ և ծառայություններ մատուցել ապագայում (սև ցանկում ընդգրկել – կազմակերպությունները ներառել այս ցանկում):
Վատ փաստաթղթավորում	Տեղեկատվության գրանցման գործում պրոֆեսիոնալիզմի պակաս (օրինակ՝ ոչ լիարժեք, ամբողջովին չներկայացված, կողմնակալ, վատ գրված տեղեկատվություն):
Վարչական էթիկա	Էթիկայի հետ կապված եզրույթ, որը կիրառվում է հանրային կառավարման ոլորտում:
Վարչական կոռուպցիա	Կոռուպցիա, որը միջամտում է հանրային ծառայողների վարչական պարտականություններին և խանգարում է վերջիններիս պարտականությունների բարեխիղճ կատարմանը: Սա խանգարող հանգամանքներից մեկն է, որը կա-

	րող է խոչնդոտել կառավարման բարեփոխումներին:
Վարչական հաշվետվողականություն	Վարչական և իրավական հարցերով զբաղվող հանրային ծառայողների պատասխանատվությունը բոլոր ընթացակարգերին հետևելու և իրենց շահառուներին հաշվետու լինելու առումով՝ պահպանելով բարեվարքության նորմերը, օրենքներն ու կանոնակարգերը:
Վարչական հրաման	Նախագահի կամ վարչապետի ակտ, որն ուղղված է պետական պաշտոնյաներին և հաստատություններին ու օրենքի ուժով կարգավորում է վերջիններիս գործողությունները:
Վարչական պատշաճ գործընթաց	Օրենքներին, կանոններին և կանոնակարգերին հետևելու միջոցով հանրային ծառայողների կողմից իրենց պարտականությունների կատարման ապահովում գրավոր կարգադրությունների համաձայն, որի արդյունքում կառավարման մարմինները չեն կարող մերժել հանրության իրավունքների իրականացումը, ընդունել կամայական որոշումներ և չարաշահել պետական իշխանությունը:
Վարքագծի կանոնագիրք	Սահմանված կանոններ, որոնցում ներկայացված է անհատի, կուսակցության կամ կազմակերպության համար նախատեսված պատշաճ վարքագիծը կամ պարտականությունները:
Վերահսկողություն	Գործընթացի կառավարում և դրան կատմամբ վերահսկողություն

Վերապահված շահ	Փոխանցելի իրավունք, որևէ մեկի՝ սեփական օգուտը պաշտպանելու հատուկ շահ:
Վերևից ներքև մոտեցում	Կազմակերպությունում օգտագործվող առաջնորդության ձև, որի ժամանակ բոլոր որոշումները և պլանավորումները ընդունվում են գլխավոր ղեկավարների կողմից և այնուհետև դրանց մասին տեղյակ են պահվում ավելի ցածր մակարդակում գտնվող պաշտոնյաները և աշխատակիցները:
Վիկտիմիզացիա	Անարդար վերաբերմունք աշխատողի նկատմամբ գործատուի կամ մեկ այլ աշխատակցի կողմից:
Վիճարկում	Պաշտոնապես ձևակերպված հարցադրում ղեկավար աշխատակցի կողմից ընդունված որոշման ճշմարիտ լինելու վերաբերյալ:
Վստահություն	Վստահությունը մեկ անձի (օրինակ՝ բաժնետիրոջ) ցանկությունն է գտնվել խոցելի վիճակում այլ անձի (օրինակ՝ կազմակերպության) համար, հույս ունենալով, որ իր շահերը չեն ոտնահարվի: Վստահությունը հիմնվում է այն ակնկալիքի վրա, որ այդպիսի վստահություն վայելողը (օրինակ՝ ձեր կազմակերպությունը) կարող է անել այն, ինչ պնդում է: Վստահությունը ցուցաբերվում է կամավոր կերպով, այն չի կարող պահանջվել: Վստահություն չի կարող ցուցաբերվել, եթե որևէ մեկը վստահ չէ, որ գործ ունի արժանահավատ սուբյեկտի հետ:

<p>Տակտիկական միջամտություններ</p>	<p>Սոցիալական հաշվետվողականության փորձագետ Ջոնաթան Ֆոքսը սահմանում է տակտիկական միջամտությունները (որոնք տարանջատված են ռազմավարական միջամտություններից) որպես փոփոխություն կատարելու տեսության վերաբերյալ մոտեցում, որը ենթադրում է, որ կարելի է «ձգել» պատճառական շղթան՝ դրա մի օղակի, օրինակ՝ գնման գործընթացի կամ կրթության վերաբերյալ քաղաքականության հասցեագրման միջոցով:</p>
<p>Տեղեկատվական անհամաչափություն</p>	<p>Իրավիճակ, որտեղ կողմերից մեկը մյուս կողմի համեմատությամբ ունի ավելի շատ կամ գերակա տեղեկատվություն: Տեղեկատվական անհամաչափությունները ստեղծում են բազմաթիվ կոռուպցիոն հնարավորություններ: «Պատվիրատու-գործակալ» խնդիրը մասամբ պահանջում է մեր կողմից պատվիրատուների և գործակալների միջև տեղեկատվական անհամաչափությունների ուղղում՝ տվյալ ոլորտում անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար: Լրացուցիչ տեղեկատվական անհամաչափություններ կարող են ծագել նաև պատվիրատուի, գործակալի և հաճախորդի միջև:</p>
<p>Տեղեկատվության խեղաթյուրում</p>	<p>Տեղեկատվության սխալ մեկնաբանություն կամ ապակողմնորոշող տեղեկության տրամադրում:</p>

Տեղեկատվության մատչելիություն	<p>Քաղաքացիների հնարավորությունը ազատ և օրինական կերպով օգտվելու այլոց (հատկապես կառավարության) տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունից, եթե օրենքով նախատեսված չէ որևէ հատուկ արգելք այդպիսի մատչելիության համար: Այդպիսի հնարավորությունը հաճախ ապահովում է «Տեղեկատվության ազատության մասին օրենքը»:</p>
Տեղեկատվությունը թաքցնելը	<p>Որևէ մեկի ունեցած համապատասխան տեղեկատվության բացահայտումից զերծ մնալը:</p>
Տեղեկատվությունը չբացահայտելը	<p>Իրավիճակ, որտեղ կողմերից մեկը չի տրամադրում որոշակի տեղեկություն մեկ ուրիշին:</p>
Տեսլական	<p>Տեսլականը ներկայացնում է, թե կազմակերպությունը ինչ հավակնություններ ունի և տալիս է դրա ապագա գործունեության ձևը և ուղղությունը: Այս կերպ տեսլականը ներկայացվում է որպես ցանկալի ապագա կարգավիճակ:</p>
Տոհմականություն	<p>Որևէ տոհմի ինքնության և հավատարմության զգացում:</p>
Տրամաբանական կառուցվածքի վերլուծություն	<p>Տրամաբանական կառուցվածքի վերլուծությունը առանձնահատուկ վերլուծական մեթոդ է, որը հաճախ հանդիսանում է դոնոր կազմակերպությունների պահանջ՝ նպատակ ունենալով ցույց տալ ծրագրի հիմքում դրված գաղափարի վերլուծությունը, կառուցվածքը և համակարգվածությունը:</p>

Տուժող	Անարդարացի վերաբերմունքի պատճառով զայրացած կամ դժգոհ անձ:
Քաղաքական ապակենտրոնացում	Քաղաքական ապակենտրոնացումը նպատակ ունի քաղաքացիներին և նրանց կողմից ընտրված ներկայացուցիչներին տալ ավելի լայն լիազորություններ տեղերում հանրային որոշումներ կայացնելիս: Սա հաճախ նույնացվում է բազմակարծ քաղաքականության և ներկայացուցչական կառավարության հետ, այն նաև կարող է աջակցել ապակենտրոնացմանը՝ ավելի լայն լիազորություններ տալով քաղաքացիներին և նրանց կողմից ընտրված ներկայացուցիչներին քաղաքականությունների ձևավորման և կիրառման հարցում:
Քաղաքականություն	Օրենքների, կարգավորումների և կառավարության կողմից ընդունված այլ կանոնների ու ֆինանսավորման միջոցառումների համակարգ, որը պահանջում է անհատների, կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց որոշակի գործողություններ, սահմանափակում է դրանք կամ վճարում է դրանց համար, որոնք միասին նպաստում են կառավարության հատուկ նպատակների իրականացմանը:
Քաղաքացիների կողմից իրականացվող սոնիտորինգ՝ բարեվարքու-	Քաղաքացիների մասնակցության միջոցով համայնքների նախանշմանն ուղղված գործունեություն, որի նպատակն է ներգրավել քաղաքացիներին և իրականացնել փաստահավաք գործունեու-

<p>թյան մոտեցման կիրառման միջոցով</p>	<p>թյուն նրանց համայնքներում իրականացվող զարգացման ծրագրերի և ծառայությունների մատուցման հաշվետվողականության, թափանցիկության և արդյունավետության հետ կապված հարցերի վերաբերյալ: Հետագայում տվյալներն օգտագործվում են առկա խնդիրների վերհանման, արդյունավետ լուծումներ առաջարկելու և իրականացնելու հարցում մոնիտորինգ իրականացնողների և այլ անձանց աջակցելու համար: Սրա արդյունքում ստեղծվում է հետադարձ կապ բոլոր կողմերի միջև:</p>
<p>Քաղաքացիների մասնակցություն</p>	<p>Քաղաքացիների ներգրավումը վարչական և քաղաքականության մշակմանն առնչվող գործողությունների լայն շրջանակում, ներառյալ մատուցվող ծառայությունների մակարդակների սահմանումը, բյուջետային առաջնահերթությունները և շինարարական նախագծերի ընդունելիությունը, նպատակ ունենալով կառավարության ծրագրերն ուղղորդել դեպի համայնքի կարիքները, ապահովել հանրության աջակցությունը և խրախուսել շրջապատի և հասարակության հետ փոխկապակցվածության զգացումը:</p>
<p>Քաղաքացիների ներգրավում</p>	<p>Քաղաքացիների մասնակցության ձև, որը սահմանում է քաղաքացիների՝ կառավարման մեջ ներգրավվածությունը հեշտացնելուն ուղղված քաղաքականությունների համակցություն: Համառոտ</p>

	<p>խարհային Բանկն իր 2014թ. Քաղաքացիների ներգրավման քաղաքականության մեջ տարբերակում է ներգրավվածության չորս հիմնական տեսակ. քաղաքացիների ներգրավում (ա) գանգատների, (բ) մշտադիտարկման, (գ) առաջարկների և (դ) բավարարման միջոցով: Մասնակցության օրակարգը պահանջում է պատվիրատուի աջակցությունը: Քաղաքացիների ներգրավման քաղաքականությունն ընդունում է, որ դրա մշտական իրականացումն անհնար է:</p>
<p>Քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ)</p>	<p>Կազմակերպություն, որի քաղաքացիկամ ռեզիդենտ հանդիսացող անդամները/մասնակիցները միավորվում են համայնքային խնդիրների լուծմանն աջակցելու համար:</p>
<p>Քննադատական դիտարկումներ</p>	<p>Քննադատական դիտարկումների օգտագործումը որպես ուսուցողական մոտեցում, որի ընթացքում փորձնական ապացույցների հիման վրա քննադատական վերլուծության են ենթարկվում տվյալ ոլորտում լայն տարածում ստացած սկզբունքներն ու ենթադրությունները: Օրինակ, կարելի՞ է վերացնել կոռուպցիան: Ի՞նչ է գործնականում նշանակում զրոյական հանդուրժողականության քաղաքականությունը: Ինչու՞ է այդքան դժվար պայքարել կոռուպցիայի դեմ: Որո՞նք են դրա գործառույթները: Ունի՞ արդյոք կոռուպցիան դրական</p>

	կողմեր: Ինչու՞ են ձախողվում բազմաթիվ բարեփոխումներ: Ինչու՞ են որոշ երկրներում համատեղվել աճի բարձր ցուցանիշները կոռուպցիայի հետ:
Քրոնիզմ	Մոտ ընկերներին անարդարացի առավելության տրամադրում, հատկապես նրանց բարձր պաշտոններում նշանակելու միջոցով, անկախ նրանց մասնագիտական որակավորումից: Հետևաբար, քրոնիզմը գործնականում չի կարող համարվել օրինակելի սկզբունք:
Ուղղահայաց հաշվետվողականություն	Ազգային բարեվարքության համակարգում ուղղահայաց հաշվետվողականությունը առկա է, երբ քաղաքացիները կամ նրանց ասոցիացիաներն ուղղակի դերակատարում ունեն իշխանություններին հաշվետու դարձնելու գործում: Ընտրությունները ուղղահայաց հաշվետվողականության ձևական ինստիտուցիոնալ միջոց են: Սակայն առկա են ոչ ֆորմալ գործընթացներ, որոնց միջոցով քաղաքացիները միավորվում են ասոցիացիաներում, որոնք ունակ են ազդել կառավարությունների և մասնավոր ծառայություններ մատուցողների վրա, պահանջելով բացատրություններ և սպառնալով ոչ ֆորմալ սանկցիաների՝ օրինակ՝ բացասական հրապարակային վերաբերմունքի, կիրառմամբ:
Ուսումնական պատմվածք	Ուսուցման գործիք պատմվածքի տեսքով, որտեղ հաճախ պատկերվում է ուսանողի կամ սովորողի համար հե-

	<p>տաքրքրական թեմային վերաբերող հաջողությունը կամ ձախողումը, շարադրվում է տեղի է ունեցածը, հնարավորություն տալով ուսանողներին խորհելու և վերլուծելու կատարված տարբեր գործողությունները և դրանց արդյունքում ստացված տարբեր արդյունքները: Մովորաբար ուսանողներին խնդրում են վերարտադրել կատարվածը, կանգ առնելով տարբեր դրվագների վրա, և նրանց առաջարկվում է վերլուծել իրավիճակը և պատասխանել հարցերին:</p>
<p>Ուսումնական օրինակ</p>	<p>Ուսումնական օրինակը պարունակում է իրական կամ հորինված պատմվածք կազմակերպության կամ անհատի մասին, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս զարգացնել վերլուծական հմտությունները և ուսուցումը: Ուսումնական օրինակը հաճախ հասնում է մինչև որոշումների կայացման կամ ճգնաժամային իրավիճակի, որն ուղանողներից պահանջում է ձևակերպել իրենց ընդունած որոշումը, լուծումը կամ գործողությունների ծրագիրը: Ուսումնական օրինակները հաճախ օգտագործվում են բիզնեսի, պետական քաղաքականության և պետական կառավարման դպրոցներում: Համապատասխան տարիքի համար նախատեսված ուսումնական օրինակները կարող են կիրառվել դպրոցականների, ինչպես նաև մեծահասակների համար:</p>

<p>«Ուրվական» աշխատակից</p>	<p>Կազմակերպության հաստիքացուցակում գրանցված անձ, ով փաստացի այդ կազմակերպությունում չի աշխատում:</p>
<p>Փոխանցում</p>	<p>Որոշում կայացնելու, ֆինանսական և վարչական խնդիրներում լիազորության փոխանցումը տեղական իշխանություններին: Փոխանցման միջոցով սովորաբար պատասխանատվությունը տրվում է համայնքներին, որոնք ընտրում են համայնքի ղեկավարներ և կոլեգիալ մարմիններ, ինքնուրույն կազմում են իրենց բյուջեն և իրավասու են ներդրումների հետ կապված որոշումներ ընդունել: Փոխանցման վրա հիմնված համակարգում տեղական իշխանություններն ունեն հստակ և օրենքով ճանաչված աշխարհագրական սահմաններ իրենց իշխանությունն ու հանրային գործառնություններն իրականացնելու համար:</p>
<p>Փողերի լվացում</p>	<p>Ապօրինի կերպով ձեռք բերված գումարի ծագման իրական աղբյուրը թաքցնելը՝ իրավաչափ անձանց կամ հաշիվների միջոցով:</p>
<p>Փոփոխության տեսություն</p>	<p>Մա սոցիալական փոփոխության պլանավորման, դրանում մասնակցություն ցուցաբերելու և այն գնահատելու մեթոդաբանություն է: Այն լայնորեն օգտագործվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների և հանրային սեկտորի կողմից:</p>

Օգնություն	Անհրաժեշտ աջակցության տրամադրում:
Օմբուդամեն	Մշտապես գործող մարմին (սովորաբար կառավարության կազմում), որը գանգատներ է ստանում քաղաքացիներից և գործում է նրանց անունից՝ ստուգելով տեղեկատվության իսկությունը, ներկայացնելով ծառայությունների վերաբերյալ պահանջներ և հետամուտ լինելով բողոքների ընթացքին: Օմբուդամենը հաճախ կարևոր դեր է կատարում Բարեվարքության ազգային համակարգի շրջանակներում անկյունագծային հաշվետվողականության ապահովման գործում:
Ֆավորիտիզմ	Չարդարացված նախասիրության կամ արտոնության ցուցադրում կամ ցուցաբերում:
Ֆիդուցիար պատասխանատվություն	Վստահության վրա հիմնված իրավական կամ էթիկական պատասխանատվություն, որը ենթադրում է ձեռնարկության գործունեության հետ կապված հարցերում գործունեության իրականացում ելնելով հաճախորդի, այլ ոչ թե ֆիդուցիարի անձնական շահերից: Տնօրենների ֆիդուցիար պարտավորությունը, ի թիվս այլոց, ներառում է հոգ տանելու, նվիրվածության, անկեղծության և բարի կամքի պարտավորությունները:

Ֆրանչայզինգ	Կառավարության կողմից մասնավոր հատվածի հետ պայմանագրի կնքում, օրինակ՝ հանրային ծառայությունների մատուցման համար:
--------------------	---

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<p>Աֆրիկյան զարգացման բանկի խումբ</p> <p>http://www.afdb.org/en/</p>	<p>Աֆրիկյան զարգացման բանկի (ԱԶԲ) խմբի հիմնական նպատակն է խթանել կայուն տնտեսական զարգացումը և սոցիալական առաջընթացը իր տարածաշրջանային անդամ պետություններում (ՏԱՊ-ներ), դրանով իսկ նպաստելով աղքատության վերացմանը:</p>
<p>Աֆրիկյան պառլամենտական ցանց ընդդեմ կոռուպցիայի (ԱՊՑԸԿ)</p> <p>http://www.apnacafrica.org/</p>	<p>ԱՊՑԸԿ Աֆրիկյան պառլամենտականների ցանց է, որի նպատակն է ներգրավել պառլամենտականներին կոռուպցիայի դեմ պայքարի մեջ: ԱՊՑԸԿ ձևավորվել է 1999թ. փետրվարին Կամպալայում:</p>
<p>Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց</p> <p>http://www.oecd.org/corruption/acn/</p>	<p>Հակակոռուպցիոն ցանցը (ՀԿՑ) ձևավորվել է 1998թ., հանդիսանում է ՏՀԶԿ Կոռուպցիայի հարցերով աշխատանքային խմբի տարածաշրջանային իրազեկման ծրագիր:</p>
<p>«Աշոկա» փոփոխություն կատարողների ցանց</p> <p>www.ashoka.org</p>	<p>«Աշոկա» ցանցը սոցիալական ձեռնարկատերերի ամենամեծ ցանցն է համաշխարհային մակարդակով (ներառյալ այն ցանցերը, որոնք աշխատում են բերելարքության, թափանցիկության և հաշվետվողականության</p>

	<p>ոլորտներում), ընդգրկում է մոտ 3000 անդամ 70 երկրից, ովքեր համակարգի փոփոխմանն ուղղված իրենց գաղափարները կյանքի են կոչում գլոբալ մակարդակով:</p>
<p>Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ) http://www.adb.org/</p>	<p>ԱԶԲ-ը տարածաշրջանային զարգացման բանկ է, հիմնադրվել է 1966թ., գլխամասը գտնվում է Մետրո Մանիլայում, Ֆիլիպիններ: ԱԶԲ-ի նպատակն է նպաստել Ասիայի տնտեսական զարգացմանը:</p>
<p>Կենտրոնական եվրոպական համալսարան (ԿԵՀ) և Բիզնես դպրոց http://www.ceu.edu/</p>	<p>ԿԵՀ-ի բիզնես դպրոցը հիմնադրվել է Բուդապեշտում 1988թ., այնուհետև ընդլայնվել է՝ դառնալով ավելի մեծ բարձրագույն ուսումնական հաստատություն, 1991թ.-ից հանդես է գալիս որպես Կենտրոնական եվրոպական համալսարան: Այն ղեկավարում է Ջորջ Սորոսը:</p>
<p>Եվրոպայի խորհուրդ (ԵԽ) http://www.coe.int/en/web/portal/home</p>	<p>Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի մարդու իրավունքներով զբաղվող առաջատար կազմակերպություն է: Այն ունի 47 անդամ պետություն, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան,</p>

	<p>որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը:</p>
<p>Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակ (ԽՊԵԳ) http://ec.europa.eu/anti_fraud/index_en.htm</p>	<p>ԽՊԵԳ նպատակն է պաշտպանել Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական շահերը՝ խարդախությունը, կոռուպցիան և այլ անօրինական գործողությունները հետաքննելու միջոցով: Այն նաև բացահայտում և հետաքննում է ԵՄ ինստիտուտների և մարմինների անձնակազմի և անդամների կողմից պաշտոնական լիազորությունների իրականացման հետ կապված լուրջ գործերը, որոնք կարող են հանգեցնել կարգապահական կամ քրեական վարույթի: ԽՊԵԳ-ը նաև աջակցում է ԵՄ ինստիտուտներին, մասնավորապես Եվրոպական հանձնաժողովին, խարդախության դեմ օրենսդրության և քաղաքականության մշակման և իրականացման հարցում:</p>
<p>Եվրոպական հանձնաժողով (ԵՀ) http://ec.europa.eu/index_en.htm</p>	<p>Եվրոպական հանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Այն ներկայացնում է ոչ թե առանձին պետությունների, այլ ողջ Եվրոպական միության շահերը:</p>

<p>Եվրոպական գործընկերներ ընդդեմ կոռուպցիայի (ԵԳԸԿ) http://www.epac.at/</p>	<p>ԵԳԸԿ անկախ, ոչ ֆորմալ ցանց է, որը միավորել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ավելի քան 60 հակակոռուպցիոն ու քաղաքականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների:</p>
<p>Ֆորդ հիմնադրամ (ՖՀ) http://www.fordfoundation.org/</p>	<p>Ֆորդ հիմնադրամը հիմնադրվել է 1936թ., այն նպատակ ունի ամրապնդել ժողովրդավարական արժեքները, նվազեցնել աղքատությունը և անարդարությունը, նպաստել միջազգային համագործակցությանը, խթանել համաշխարհային մարդկային ձեռքերումները:</p>
<p>Գլոբալ ինթեգրիթի (ԳԻ) https://www.globalintegrity.org/</p>	<p>Գլոբալ ինթեգրիթին պաշտպանում է թափանցիկ և հաշվետու կառավարումն ամբողջ աշխարհում՝ ստեղծելով նորարարական հետազոտություններ և տեխնոլոգիաներ, որոնք տեղեկացնում, փոխկապակցում և հզորացնում են քաղաքացիական, մասնավոր և հանրային բարեփոխում իրականացնողներին, ցանկանալով ունենալ ավելի բաց հասարակություններ:</p>
<p>Պառլամենտականների համաշխարհային կազմակերպություն ընդդեմ կոռուպցիայի</p>	<p>ՊՀԿԸԿ-ը պառլամենտականների միջազգային ցանց է, որը նպատակաուղղված է ողջ աշխարհում լավ կառավարմանը և կո-</p>

<p>(ՊՀԿԸԿ) http://gopacnetwork.org/</p>	<p>ռուպցիայի դեմ պայքարին: Իր հիմնադրման օրվանից ՊՀԿԸԿ-ը տրամադրել է տեղեկատվություն և կատարել վերլուծություններ, սահմանել է միջազգային չափանիշներ, և բարձրացրել է հանրային իրազեկումը համաշխարհային ազդեցության և ազգային գործողությունների համադրության միջոցով:</p>
<p>Համաշխարհային գործընկերություն սոցիալական հաշվետվողականության համար (ՀԳՍՀ) http://www.thegpsa.org/sa/</p>	<p>ՀԳՍՀ-ը աջակցում է քաղաքացիական հասարակությանը և կառավարություններին՝ զարգացող երկրներում կառավարման կարևոր մարտահրավերների լուծմանն ուղղված համատեղ աշխատանք կատարելու առումով:</p>
<p>Գլոբալ Ուիթնես (ԳՈւ) https://www.globalwitness.org/en/</p>	<p>Գլոբալ Ուիթնեսը բացահայտում է բնական ռեսուրսների, կոռուպցիայի, զինված ընդհարումների և շրջակա միջավայրի ոչնչացման միջև թաքնված կապերը:</p>
<p>Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ (ԳՐԵԿՈ խումբ) http://www.coe.int/t/dg/hi/monitoring/greco/default_en.asp</p>	<p>ԳՐԵԿՈ խումբը ձևավորվել է 1999թ. Եվրոպայի խորհրդի կողմից՝ նպատակ ունենալով մոնիտորինգի ենթարկել պետությունների համապատասխանությունը կազմակերպության հակակոռուպցիոն չափանիշներին: ԳՐԵԿՈ խմբի նկատակն է բարելավել իր անդամների կարողությունները</p>

	<p>կոռուպցիայի դեմ պայքարելու գործում՝ Եվրոպայի խորհրդի հակակոռուպցիոն չափանիշներին նրանց համապատասխանությունը մոնիտորինգի ենթարկելու միջոցով, անդամ պետությունների փոխադարձ գնահատման և ազդեցության դինամիկ գործընթացի հիման վրա:</p>
<p>Հյուլեթ հիմնադրամ http://www.hewlett.org/</p>	<p>Հիմնադրամի ծրագրերը նպատակ ունեն աջակցել գլոբալ աղքատության նվազեցմանը, սահմանափակել կլիմայական փոփոխությունների ռիսկը, բարելավել Կալիֆորնիայում և այլ վայրերում ուսանողների կրթությունը, բարելավել վերարտադրողական առողջությունն ու իրավունքները ողջ աշխարհում, աջակցել կատարողական արվեստին մեր համայնքներում, բարելավել բարեգործության բնագավառը և նպաստել արդյունավետ ու թափանցիկ կառավարմանն ամբողջ աշխարհում:</p>
<p>Անվտանգության ուսմունքների ինստիտուտ (Աֆրիկայի ԱՌԻ) https://www.issafrica.org/</p>	<p>Անվտանգության ուսմունքների ինստիտուտը աֆրիկյան կազմակերպություն է, որը նպատակ ունի բարելավել մարդու անվտանգությունը մայրցամաքում: Այն կատարում է անկախ և հեղինակավոր հետազոտու-</p>

	<p>թյուններ, տրամադրում է փորձագիտական վերլուծություն և խորհրդատվություն, իրականացնում է պրակտիկ վերապատրաստման դասընթացներ և տեխնիկական աջակցություն:</p>
<p>Ինթեգրիթի էքշն http://www.integrityaction.org/</p>	<p>Միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որը հիմնվելով կրթության և համայնքներում բարեվարքության կառուցման վրա, նպաստում է բարեվարքության կառուցման մոտեցմանը՝ նպատակ ունենալով նվազեցնել կոռուպցիան կառավարություններում, բիզնեսում և քաղաքացիական հասարակությունում: Պրակտիկ հմտություններ և վարքագծի կանոններ են ուսուցանվում և կիրառվում՝ հաշվետվողականության, համապատասխանության, էթիկայի, կոռուպցիայի բացառման (այսինքն՝ կոռուպցիայի նկատմամբ վերահսկողության) համադրման միջոցով:</p>
<p>Սպորտային անվտանգության միջազգային կենտրոն (ՍԱՄԿ) http://www.theicss.org/en</p>	<p>Կենտրոնի գլխամասային գրասենյակը գտնվում է Դոհայում, Քաթար: ՍԱՄԿ-ի նպատակ ունի բարելավել սպորտում անվտանգությունը, ապահովությունը և բարեվարքությունը՝ իրական խնդիրների լուծման և համաշ-</p>

	<p>խարհային առաջատար ծառայությունների, հնտությունների, ցանցերի և գիտելիքների տրամադրման միջոցով:</p>
<p>Առևտրի միջազգային պալատ (ԱՄՊ) http://www.iccwbo.org/</p>	<p>ԱՄՊ-ը բիզնես և այլ կազմակերպությունների համար տրամադրում է ֆորում՝ համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող լուրջ տեղաշարժերի բնույթն ու նշանակությունը հետազոտելու և ավելի լավ հասկանալու համար: ԱՄՊ կանոնները սահմանում են այն հիմնարար միջոցները, որոնք կազմակերպությունները պետք է ձեռնարկեն կոռուպցիայի կանխարգելման համար: ԱՄՊ այս կանոնները համարվում են ինքնակարգավորման մեթոդ միջազգային բիզնես կազմակերպությունների համար և հանդիսանում են լավագույն առևտրային պրակտիկա կոռուպցիայի դեմ պայքարում:</p>
<p>Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) http://www.imf.org/external/index.htm</p>	<p>ԱՄՀ-ը 188 անդամ պետությունից բաղկացած կազմակերպություն է, որն աշխատում է նպաստել համաշխարհային արժույթային համագործակցությանը, ապահով ֆինանսական կայունությանը, խթանել միջազգային առևտուրը, նպաստել բարձր զբաղվա-</p>

	<p>ծուխյանը և կայուն տնտեսական աճին, և նվազեցնել աղքատությունը ողջ աշխարհում: ԱՄՆ աշխատում է իր անդամ պետությունների հետ՝ նպաստելու համար լավ կառավարմանը և կոռուպցիայի դեմ պայքարին:</p>
<p>Բնական ռեսուրսների կառավարման ինստիտուտ http://www.resourcegovernance.org/</p>	<p>Բնական ռեսուրսների կառավարման ինստիտուտը նպաստում է հաշվետու և արդյունավետ կառավարմանը արդյունահանող արդյունաբերություններում:</p>
<p>Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Հանրային ինստիտուտների և հանրային կառավարման դպրոցների ցանց (ԿԱԵ ՀԻՀԿԴՑ) http://www.nispa.org/</p>	<p>ԿԱԵ ՀԻՀԿԴՑ գործունեության հիմնական նպատակն է նպաստել հանրային կառավարման առարկաների և վերապատրաստման դասընթացների զարգացմանը հետխորհրդական պետություններում:</p>
<p>«Օմիդյար» ցանց https://www.omidyar.com/</p>	<p>«Օմիդյար» ցանցը ներդրում է կատարում 5 հիմնական ոլորտում գործող ձեռնարկությունները: Այդ ոլորտներն են՝ համացանցը և հեռախոսը սպառողների համար, կրթություն, ֆինանսական ներգրավվածություն, կառավարում և քաղաքացիների մասնակցություն, և սեփականության իրավունքներ:</p>
<p>Բաց կառավարման</p>	<p>Բաց կառավարման գործընկեր</p>

<p>գործընկերություն (ԲԿԳ) http://www.opengovpartnership.org/</p>	<p>րությունը բազմակողմանի նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կառավարությունների կողմից կոնկրետ պարտավորությունների կատարումը, որոնք ուղղված են թափանցիկության խթանմանը, քաղաքացիների կարողությունների զարգացմանը, կոռուպցիայի դեմ պայքարի աջակցմանը և նոր կառավարման ուժեղացմանն ուղղված տեխնոլոգիաների օգտագործմանը:</p>
<p>Բաց հասարակության հիմնադրամներ (ԲՀՀ) https://www.opensocietyfoundations.org/</p>	<p>Բաց հասարակության հիմնադրամներն աշխատում են կառուցել կենսունակ և հանդուրժող հասարակություններ, որոնց կառավարությունները հաշվետու են և բաց բոլոր մարդկանց մասնակցության համար:</p>
<p>Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ) http://www.oecd.org/corruption/acn/</p>	<p>ՏՀԶԿ-ը օգտագործում է հարցերի լայն շրջանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ նպատակ ունենալով աջակցել կառավարություններին տնտեսական աճի և ֆինանսական կայունության միջոցով նպաստելու բարեկեցությանը և պայքարելու աղքատության դեմ՝ հաշվի առնելով տնտեսական և սոցիալական զարգացման ազդեցությունները միջավայրի վրա:</p>
<p>Ամերիկյան</p>	<p>ԱՊԿ-ը միավորում է Ամերիկայի</p>

<p>պետությունների կազմակերպություն (ԱՊԿ) http://www.oas.org/en/default.asp</p>	<p>բոլոր 35 անկախ պետություններին և հանդիսանում է այդ կիսագնդի հիմնական քաղաքական, դատական ու սոցիալական կառավարական ֆորումը: Ի լրումն, այն 69 պետության, ինչպես նաև Եվրոպական միությանը (ԵՄ) տվել է մշտական դիտորդի կարգավիճակ: Կազմակերպությունն օգտագործում է 4 կետերից բաղկացած մոտեցում իր սկզբնական նպատակներն արդյունավետորեն իրականացնելու համար, որը հիմնված է իր հետևյալ չորս հիմնական սյուների վրա. ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, անվտանգություն և զարգացում: Կոռուպցիայի դեմ պայքարը իշխանության ժողովրդավարական իրականացման կարևոր ասպեկտն է, որը հանդիսանում է Միջամերիկյան ժողովրդավարական խարտիայի պահանջ, և հետևաբար, հանդիսանում է ԱՊԿ բոլոր պետությունների համար առաջնահերթ հարց:</p>
<p>Պատասխանատու կառավարման վերաբերյալ կրթության սկզբունքներ (ՊԿԿՍ) http://www.unprme.org/</p>	<p>ՊԿԿՍ-ի առաքելությունն է գլոբալ առաջնորդությանը գործի դնել և պաշտպանել պատասխանատու կառավարման վերաբերյալ սկզբունքները, հետա-</p>

	գոտությունը և դրանց ընկալումը համաշխարհային առաջնորդության կողմից:
<p>Հարավ-Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանային հակակոռուպցիոն նախաձեռնություն (ՏՀՆ) http://rai-see.org/</p>	<p>ՏՀՆ-ը միջպետական տարածաշրջանային կազմակերպություն է, որը գործ ունի բացառապես հակակոռուպցիոն հարցերի հետ, ունի ինը անդամ պետություն. Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Մոլդովա, Մոնտենեգրո, Ռումինիա և Սերբիա:</p>
<p>Հարավ-աֆրիկյան զարգացման համայնք (ՀԱԶՀ) http://www.sadc.int/</p>	<p>ՀԱԶՀ-ը տարածաշրջանային տնտեսական համայնք է, որը բաղկացած է 15 անդամ պետությունից. Անգոլա, Բոթսվանա, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն, Լեսոթո, Մադագասկար, Մալավի, Մավրիկիոս, Մոզամբիկ, Նամիբիա, Սեյշելներ, Հարավային Աֆրիկա, Սվազիլենդ, Տանզանիա, Զամբիա և Զիմբաբվե: ՀԱԶՀ-ը հիմնադրվելով 1992թ., դրա նպատակաուղղված է Հարավային Աֆրիկայում տնտեսական զարգացման և խաղաղության ու անվտանգության ապահովման միջոցով տարածաշրջանային ինտեգրմանը ու աղքատության վերացմանը: 2001թ. ՀԱԶՀ-ը նախաձեռնել է կոռուպցիայի դեմ ար-</p>

	<p>ձանագրության ընդունումը:</p>
<p>Ստոկհոլմի միջազգային Ջրի ինստիտուտ (ՄՄՋԻ) http://www.siwi.org/</p>	<p>Ստոկհոլմի միջազգային Ջրի ինստիտուտը (ՄՄՋԻ) հիմնադրվել է 1991թ., այն ապահովում և նպաստում է կայուն զարգացման համար ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործմանը 5 թեմատիկ ոլորտներում. ջրային ռեսուրսների կառավարում, ջրային ռեսուրսների միջսահմանային կառավարում, կլիմայի փոփոխություն և ջրային ռեսուրսներ, ջրային էներգիայի հետ կապված սնունդ և ջրային տնտեսություն:</p>
<p>ԳԳՎ-ը հանդիսանում է Լամայա-խարիայի բանկի խմբի և ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցագործության հարցերով գրասենյակի (ՄԱԿԹՀԳ) միջև համագործակցություն, որն աջակցում է կոռուպցիայի միջոցով ձեռք բերված ֆինանսներն ապահով թաքցնելու պրակտիկային վերջ դնելու միջազգային ջանքերին: ԳԳՎ-ը աշխատում է զարգացող պետությունների և ֆինանսական կենտրոնների հետ՝ կանխելու համար կոռուպցիայի արդյունք հանդիսացող փողերի լվացումը և նպաստելու գողացված գույքի ավելի համակարգային և ժամանակին վերադարձմանը:</p>	<p>ԳԳՎ-ը հանդիսանում է Լամայա-խարիայի բանկի խմբի և ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցագործության հարցերով գրասենյակի (ՄԱԿԹՀԳ) միջև համագործակցություն, որն աջակցում է կոռուպցիայի միջոցով ձեռք բերված ֆինանսներն ապահով թաքցնելու պրակտիկային վերջ դնելու միջազգային ջանքերին: ԳԳՎ-ը աշխատում է զարգացող պետությունների և ֆինանսական կենտրոնների հետ՝ կանխելու համար կոռուպցիայի արդյունք հանդիսացող փողերի լվացումը և նպաստելու գողացված գույքի ավելի համակարգային և ժամանակին վերադարձմանը:</p>

<p>Թրանսպարենսի հնթերնեշնլ (ԹԻ) https://www.transparency.org/</p>	<p>Միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որն աշխատում է հակակոռուպցիոն ոլորտում, նպաստում է ողջ աշխարհում հասարակությունների թափանցիկությանն ու հաշվետվողականությանը:</p>
<p>ՄԱԿ-ի համաշխարհային համաձայնագիր https://www.unglobalcompact.org/</p>	<p>ՄԱԿ-ի համաշխարհային համաձայնագիրը ռազմավարական քաղաքականության նախաձեռնություն է բիզնես կազմակերպությունների համար, որի նպատակն է նրանց գործողություններն ու ռազմավարությունները համապատասխանեցնել մարդու իրավունքների, աշխատանքի, շրջակա միջավայրի և հակակոռուպցիայի ոլորտներում համընդհանուր ձանաչում ստացած 10 սկզբունքներին:</p>
<p>Միացյալ Ազգերի Աֆրիկայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿԱՏՀ) http://www.uneca.org/</p>	<p>ՄԱԿԱՏՀ-ը լիազորված է նպաստել իր անդամ պետությունների տնտեսական և սոցիալական զարգացմանը, խթանել ներտարածաշրջանային ինտեգրումը և նպաստել միջազգային համագործակցությանը Աֆրիկայի զարգացման համար:</p>
<p>Համաշխարհային տնտեսական ֆորում http://www.weforum.org/</p>	<p>Համաշխարհային տնտեսական ֆորումը միջազգային ինստիտուտ է, որի նպատակն է բարելավել աշխարհի վիճակը՝ հան-</p>

	<p>րային և մասնավոր սեկտորների համագործակցության միջոցով: Նրանց օրակարգն ընդգրկում է «Համագործակցություն ընդդեմ կոռուպցիայի նախաձեռնությունը», որը միավորել է բիզնես կազմակերպություններին հակակոռուպցիոն ու թափանցիկության հարցերի վերաբերյալ համատեղ աշխատելու նպատակով:</p>
--	--

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԿՏԵՐ

<p>1948թ. Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդված</p>	<p>«Յուրաքանչյուր որ համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի: Այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից»:</p>
<p>1977թ. Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված Շորթման և կաշառակերության դեմ պայքարի մասին Հանձնարարական (վերանայված 2011թ.)</p>	<p>ԱՄՊ Կոռուպցիայի դեմ պայքարի մասին կանոնները կազմում են հակակառուպցիոն ոլորտում ԱՄՊ իրականացրած գործունեության հիմնաքարը, որը ծառայում է և՛ որպես բիզնես կազմակերպությունների համար ինքնակարգավորման գործիք, և՛ որպես կառավարությունների համար գործողությունների պլան շորթման և կաշառակերության դեմ պայքարում:</p>
<p>1977թ. ԱՄՆ Օտարերկրյա կոռուպցիոն պրակտիկայի մասին ակտ (փոփոխված</p>	<p>Այս ակտն ընդունվել է օտարերկրյա պաշտոնատար անձանց կողմից առևտրային կաշառակերությունը կանխելու համար: Մույն ակտը բաղկացած է երեք</p>

<p>1988թ. և 1998թ.)</p>	<p>հիմնական մասից. (1) այն պահանջում է ընկերություններից վարել ստույգ գրանցամատյաններ, փաստաթղթեր և հաշիվներ, (2) այն պահանջում է Անվտանգության և փոխանակման հանձնաժողովում գրանցված բաժնետոմսեր և արժեթղթեր թողարկող կազմակերպություններից պահպանել պատասխանատու ներքին հաշվապահական վերահսկողական համակարգ, և (3) այն արգելում է օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառքը ամերիկյան կազմակերպությունների կողմից:</p>
<p>1995թ. Համաշխարհային բանկի գնումների վերանայված և ընդլայնված ուղեցույց (վերանայված 1996, 1997 և 1999թթ.)</p>	<p>Այս ուղեցույցի նպատակն է վերականգնման և զարգացման միջազգային բանկի (ՎՋՄԲ) կամ Միջազգային զարգացման ասոցիացիայի (ՄՁԱ) կողմից տրամադրված վարկի միջոցներով ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող ծրագիր իրականացնողներին տեղեկացնել ծրագրի շրջանակներում պահանջվող ապրանքների և աշխատանքների (ներառյալ համապատասխան ծառայությունները) գնման համար իրականացվող գործողությունների մասին:</p>

<p>1995թ. ԵՄ ֆինանսական շահերի պաշտպանության վերաբերյալ համաձայնագիր</p>	<p>Այն նպատակ ունի համապատասխան քրեաիրավական միջոցներ (ինչպիսիք են խարդախության քրեականացումը, քրեական պատիժները, կազմակերպությունների դեկավաների քրեական պատասխանատվությունը և իրավասության վերաբերյալ կանոնները) ձեռնարկելու միջոցով պայքարել խարդախության դեմ, որն ազդում է իր եկամուտների և ծախսերի վրա:</p>
<p>1995թ. Քաղաքականության վերաբերյալ հայտարարություն Խորհրդատու ինժեներների միջազգային ֆեդերացիայի կողմից</p>	<p>Այն ներառում է քաղաքականության վերաբերյալ մի շարք հայտարարություններ խորհրդատու ինժեներական կազմակերպությունների վարքագծի հետ կապված, ներառյալ կոռուպցիայի վերաբերյալ հարցերի մասին, որոնք, մասնավորապես, համապատասխանում են զարգացող երկրներում հաճախորդների և ֆինանսական կազմակերպությունների կարիքներին:</p>
<p>1996թ. Առևտրի միջազգային պալատի կողմից ընդունված Խարդախության և կաշառակերության դեմ պայքարի վարքագծի կանոններ</p>	<p>Այս վարքագծի կանոններն իրենցից ներկայացնում են միջազգային բիզնես կազմակերպությունների ինքնակարգավորման մեթոդ, սակայն դրանք կարող են նաև ստանալ կա-</p>

	<p>ռավարությունների աջակցությունը: Բիզնես կազմակերպությունների կողմից այդ կանոնների կամավոր ընդունումը ոչ միայն կնպաստի բարեվարքության բարձր չափանիշների հաստատմանը բիզնես գործարքներում ինչպես բիզնես կազմակերպությունների և հանրային մարմինների, այնպես էլ բիզնես կազմակերպությունների միջև, այլև կձևավորի արժեքավոր պաշտպանություն այնպիսի կազմակերպությունների համար, որոնց նկատմամբ խարդախության փորձեր են կատարվում:</p>
<p>1996թ. Միջամերիկյան կոնվենցիա ընդդեմ Կոռուպցիայի հաստատված Ամերիկյան պետությունների կազմակերպության կողմից</p>	<p>Կոռուպցիայի դեմ միջամերիկյան կոնվենցիան ընդունվել է 1996թ. մարտին Կարակասում, Վենեսուելա: Այն հանդիսանում է առաջին իրավական փաստաթուղթն այս ոլորտում, որը ձանաչում է կոռուպցիայի՝ միջազգային մակարդակի հասնելու հանգամանքը և դրա դեմ պայքարելու համար նահանգների միջև համագործակցությանը նպաստելու և այն խթանելու անհրաժեշտությունը:</p>
<p>1996թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի</p>	<p>Հռչակագիրը կոչ է անում բոլոր պետություններին քրեականաց-</p>

<p>միջազգային առևտրային գործարքներում կոռուպցիայի դեմ հռչակագիր</p>	<p>նել միջազգային բիզնես գործարքներում օտարերկրյա հանրային պաշտոնյաների կաշառումը, և վերացնել այդպիսի կաշառքների հարկումն այն երկրներում, որտեղ դա դեռ թույլատրվում է: ԱՄՆ-ի և համահովանավորների լայն կոալիցիայի ջանքերի արդյունքում ծագել է անհապաղ և արդյունավետ միջազգային շարժումն ընդդեմ միջազգային առևտրի ոլորտում կոռուպցիայի և օտարերկրյա հանրային պաշտոնյաների կաշառման:</p>
<p>1996թ. ՄԱԿ-ի Պետական պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրք</p>	<p>1996թ. դեկտեմբերին Գլխավոր ասամբլեան ընդունել է Պետական պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրք և պահանջել, որ այն կատարվի, մասնավորապես, Տնտեսական և սոցիալական խորհրդի և նրան ենթակա մարմինների կողմից: Դրա գլխավոր սկզբունքներն են. Ազգային օրենսդրությամբ սահմանված հանրային պաշտոնը վստահություն ներշնչող կարգավիճակ է, որը հանրային շահերով առաջնորդվելու պարտականություն է սահմանում: Ավելին, հանրային պաշտոնյաները պետք է հավա-</p>

	<p>տարիմ լինեն իրենց երկրի հանրային շահին, որն արտահայտված է կառավարման ժողովրդավարական ինստիտուտների միջոցով: Հանրային պաշտոնյաները պետք է երաշխավորեն իրենց պարտականությունների և գործառույթների արդյունավետ և բարեխիղճ իրականացումը օրենքների կամ վարչական քաղաքականությունների համաձայն: Նրանք պետք է մշտապես ապահովեն իրենց պատասխանատվության ներքո գտնվող հանրային ռեսուրսների արդյունավետ և որակյալ կառավարումը: Հանրային պաշտոնյաները պետք է լինեն սիրալիր, արդար և անկողմնակալ իրենց գործառույթներն իրականացնելիս, մասնավորապես, հանրության հետ հարաբերություններում: Նրանք չպետք է թույլ տան որևէ անտեղի արտոնյալ վերաբերմունք որևէ անձի կամ խմբի նկատմամբ կամ ոչ պատշաճ ձևով խտրականություն ցուցաբերեն որևէ անձի կամ խմբի նկատմամբ, կամ այլ կերպ չարաշահեն իրենց տրված լիազորությունները:</p>
--	--

<p>1997թ. Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) Կոռուպցիայի դեմ կոնվենցիա</p>	<p>Այն նպատակ ունի նպաստել և ուժեղացնել յուրաքանչյուր անդամ պետության կողմից կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, պատժման և վերացման մեխանիզմների մշակումը, և նպաստել ու կարգավորել անդամ պետությունների միջև համագործակցությունը՝ հանրային գործառնությունների իրականացման ընթացքում կոռուպցիայի և հատկապես դրանց իրականացման հետ կապված կոռուպցիոն գործողությունների կանխարգելման, բացահայտման, պատժման և վերացման մեխանիզմների և գործողությունների արդյունավետությունն ապահովելու համար:</p>
<p>1997թ. Եվրոպական համայնքների պաշտոնյաների մասնակցությամբ կոռուպցիայի դեմ պայքարի մասին ԵՄ կոնվենցիա</p>	<p>Այս կոնվենցիան ձևավորվել է Եվրոպական պաշտոնյաների կամ Եվրոպական միության անդամ պետությունների ազգային պաշտոնյաների մասնակցությամբ կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պաշտոնյաների կողմից պասիվ կամ ակտիվ կոռուպցիոն յուրաքանչյուր գործողություն լինի քրեորեն պատ-</p>

	<p>ժելի արարք: Ծանր դեպքերում պատիժները պետք է ներառեն ազատազրկումը և էքստրադիցիան: Ավելին, բիզնես կազմակերպությունների ղեկավարները պետք է քրեական պատասխանատվություն կրեն իրենց ղեկավարության ներքո գտնվող բիզնես կազմակերպության անունից գործող անձի կողմից ակտիվ կոռուպցիա իրականացնելու դեպքում: ԵՄ անդամ պետություններում հակառուպցիոն ջանքերի գնահատման մեխանիզմի ներդրման հարցը ներկայումս գտնվում է քննարկումների փուլում:</p>
<p>1997թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Բանաձևը կոչ է անում անդամ պետությունների վավերացնել կոռուպցիայի դեմ ընդունված միջազգային փաստաթղթերը</p>	<p>Այս բանաձևը կոչ է անում բոլոր անդամ պետություններին և իրավասու տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններին հնարավորինս շուտ ստորագրել և վավերացնել ՄԱԿ-ի կոնվենցիան ընդդեմ կոռուպցիայի, որպեսզի այն շտապ ուժի մեջ մտնի:</p>
<p>1997թ. Վերանայված ուղեցույց ընդունված Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից</p>	<p>Այս ուղեցույցը վերաբերում է ԱՄՆ կառավարման հարցերին: Ընդունված ուղեցույցը հանդիսանում է գործադիր տնօրենների միջև տնտեսական արդ-</p>

	<p>յունավետության և աճի ապահովման նպատակով բարելիզ կառավարման վերաբերյալ ուժեղ կոնսենսուսի դրսևորում:</p>
<p>1997թ. Քսան ուղենիշային սկզբունք կոռուպցիայի դեմ պայքարի համար ընդունված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից</p>	<p>1997թ. նոյեմբերի 6-ին ԵԽ նախարարների կոմիտեն ընդունել է Քսան ուղենիշային սկզբունք կոռուպցիայի դեմ պայքարի համար: Այս ուղեցույցը սահմանում է հակակոռուպցիոն միջոցների լայն սպեկտր, ինչպիսիք են կոռուպցիոն հանցագործություններով անձեռնմխելիության սահմանափակումը, կաշառքի միջոցով հարկերի նվազեցման կանխարգելումը, ազատ ԶԼՄ-ները և իրավաբանական անձանց պատասխանատվությունից ազատման կանխարգելումը:</p>
<p>1997թ. ՏՀԶԿ Հակակոռուպցիոն կոնվենցիա (ստորագրված)</p>	<p>ՏՀԶԿ Հակակոռուպցիոն կոնվենցիան (պաշտոնական անվանումը՝ Միջազգային բիզնես գործարքներում օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառման դեմ պայքարի մասին կոնվենցիա) հանդիսանում է ՏՀԶԿ կոնվենցիա, որը նպատակ ունի կրճատել կոռուպցիան զարգացող երկրներում՝ կոնվենցիայի անդամ պետություններում գործող կազմա-</p>

	<p>կերպությունների կողմից իրականացվող միջազգային բիզնես գործարքներում կաշառակերության դեմ սանկցիաների կիրառումը խրախուսելու միջոցով: Այն նպատակ ունի ստեղծել իրապես բարձր դերակատարություն ունեցող հարթակներկայիս միջազգային բիզնես միջավայրում:</p>
<p>1997թ. Հյուսիսային Ամերիկայի զարգացման բանկի (ՀԱԶԲ) կողմից ընդունված հավաստագրման պահանջ</p>	<p>ՀԱԶԲ-ը հակակոռուպցիոն հավաստագրեր է պահանջում բոլոր դիմումատուներից ծրագրերի ֆինանսավորման համար: ՀԱԶԲ-ը կմերժի կամ չեղյալ կհամարի ֆինանսավորումը, եթե ծրագրի հովանավորը ներքաշված է եղել կոռուպցիոն գործողության մեջ գնային առաջարկների ներկայացման ընթացքում:</p>
<p>1998թ. Վերանայված գնումների քաղաքականություն և հակակոռուպցիոն քաղաքականություն ընդունված տարածաշրջանային զարգացման (Միջամերիկյան, Եվրոպական, Ասիական, Աֆրիկյան) բանկերի կողմից</p>	<p>1995 թվականից ի վեր, հակակոռուպցիոն շարժումը հաջողությամբ մշակել է համաշխարհային իրավական դաշտ անդրազգային կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով: Ներկայիս հակակոռուպցիոն շարժման տարբերակիչ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն շեշտադրում է կոռուպցիայի տնտեսական հետևանքների</p>

	<p>վրա և կոռուպցիայի դեմ պայքարում այնպիսի միջազգային ֆինանսական ինստիտուտների ընդգրկվածության վրա, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և տարածաշրջանային զարգացման բանկերը: Որպես կոռուպցիայի դեմ պայքարում իրենց գործողությունների մի մաս, միջազգային ֆինանսական ինստիտուտները արդյունավետ հակակոռուպցիոն բարեփոխումները դարձրել են ֆինանսների հետագա տրամադրման նախադրյալ: Ներկայիս հակակոռուպցիոն շարժումը նաև հաջողության է հասել միջազգային և տեղական քաղաքացիական հասարակության մասնակցության, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ համաձայնությունների և վարքագծի կանոնների միջոցով բիզնես համայնքի մասնակցության առումով:</p>
<p>1999թ. Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Քրեական իրավունքի և Քաղաքացիական իրավունքի կոնվենցիաներ</p>	<p>Կոռուպցիայի վերաբերյալ քրեական իրավունքի կոնվենցիան նպատակային փաստաթուղթ է, որն ուղղված է բազմաթիվ կոռուպցիոն գործողությունների համակարգված</p>

	<p>քրեականացմանը: Այն նաև ապահովում է լրացուցիչ քրեա-իրավական միջոցներ և բարելավված միջազգային համագործակցություն կոռուպցիոն հանցագործությունների քրեական հետապնդման գործընթացում: Կոնվենցիան բաց է ոչ անդամ պետությունների համար: Դրա կիրառման նկատմամբ մշտադիտարկումն իրականացվելու է Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ խմբի) կողմից, որը սկսել է գործել 1999թ. մայիսի 1-ից:</p>
<p>1999թ. Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ (Եվրոպայի խորհրդի ԳՐԵԿՈ խումբը սկսել է գործել)</p>	<p>1998թ. մայիսին Նախարարների կոմիտեն հաստատել է Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի՝ ԳՐԵԿՈ խմբի հիմնադրումը ընդլայնված մասնակի համաձայնության ձևով, և 1999թ. մայիսին հիմնադրվել է ԳՐԵԿՈ խումբը հետևյալ 17 հիմնադիր անդամների կողմից. Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Իսլանդիա, Իռլանդիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա և Շվե-</p>

	<p>դիա: Դրանից հետո դրա անդամությունը զգալիորեն աճել է: ԳՐԵԿՈ խմբին անդամակցությունը սահմանափակված չէ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններով: Ցանկացած պետություն, որը մասնակցել է ընդլայնված մասնակի համաձայնագրի մշակմանը կարող է միանալ ծանուցելով այդ մասին Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարությանը:</p>
<p>1999թ. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կոնվենցիան մտել է ուժի մեջ</p>	<p>1997թ. նոյեմբերին ՏՀԶԿ-ը ընդունել է Միջազգային բիզնես գործարքներում օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառման դեմ պայքարի կոնվենցիան: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1999թ. փետրվարին և այժմ ունի 36 անդամ, որոնք ներկայացնում են առևտրի և ներդրման ոլորտում առավելագույնս ընդգրկված պետությունների մեծ մասը: Կոնվենցիան վերաբերում է միայն կաշառք տվողների պատասխանատվությանը (ակտիվ կաշառք), սակայն ոչ օտարերկրյա պաշտոնատար անձանց, ովքեր պահանջում կամ ստանում են կաշառք (պասիվ կաշառք): Կոնվենցիան պահանջում է գոր-</p>

	<p>ծառնական հավասարաժեշտություն իր անդամների միջև:</p>
<p>2000թ. Եվրոպայի խորհրդի Կառավարության պաշտոնատար անձանց Վարքագծի տիպային կանոնագիրք</p>	<p>Այս կանոնագրքի նպատակն է հստակեցնել պաշտոնատար անձանց վարքագծի և բարեվարքության չափանիշները, աջակցել նրանց բավարարել այս չափանիշները և իրագեկել հանրությանը պաշտոնատար անձանցից ակնկալվող վարքագծի մասին:</p>
<p>2000թ. Նյագայի հռչակագիր, որը կոչ է անում Աֆրիկյան պետությունների կազմակերպությանը աշխատել գողացված գույքի վերադարձման ուղղությամբ</p>	<p>Նյագայի հռչակագիրն ընդունվել է Թրանսսփարենսի ինթերնեշնլ-ի աֆրիկյան ներկայացուցչության կողմից 2001թ. մարտին, այն կոչ է անում «վերացնել բոլոր հայտնի իրավական բացերը, պահանջելով բանկերից բացել իրենց փաստաթղթերը ստուգումների համար, եթե ամկա է ողջամիտ պատճառ անօրինական գործունեության վերաբերյալ, և իրականացնել կոռուպցիայի միջոցով ձեռք բերված գույքի պարտադիր առգրավում և վերադարձ»: Այն պարտադիր է համարում աֆրիկյան պետությունների կառավարությունների կողմից կոռուպցիայի դեմ բովանդակային պայքար մղելու քաղաքական կամքի ցուցա-</p>

	<p>բերումը և հռչակում է, որ կոռուպցիան մնում է Աֆրիկայի զարգացման խոչընդոտներից մեկը: Այսպիսով, քանի դեռ կառավարությունները շարունակում են պատշաճ ուշադրություն չդարձնել հակակոռուպցիոն բարեփոխումներին, Հազարամյակի զարգացման նպատակներում նշված զարգացումը և, մասնավորապես, աղքատության վերացումը կմնան անհասանելի:</p>
<p>2000թ. Փողերի լվացման և կոռուպցիայի վերաբերյալ Վոլֆսբերգյան սկզբունքներ ընդունված մեծ մասնավոր բանկերի կողմից</p>	<p>Խումբը ձևավորվել է 2000թ. Շվեյցարիայի հյուսիս արևելքում գտնվող Շատո Վոլֆսբերգ քաղաքում, մասնակցությամբ Թրանսպարենսի ինտերնեշնլ կազմակերպության ներկայացուցիչների, այդ թվում Ստենլի Մորիսը և պրոֆեսոր Մարկ Փայերը Բազելի համալսարանից, նպատակ ունենալով մշակել մասնավոր բանկերի համար փողերի լվացման դեմ ուղղված ուղեցույց: Մասնավոր բանկերի համար փողերի լվացման դեմ ուղղված Վոլֆսբերգյան սկզբունքները հետագայում հրապարակվեցին 2000թ.: Վոլֆսբերգյան սկզբունքները հիմնականում հետևյալներն էին:</p>

	<p>Յուրաքանչյուր հաճախորդի պետք է նույնականացնել, բոլոր հաշիվների համար պետք է սահմանվի շահավետ սեփականություն, (հարստության/ֆինանսների աղբյուրի) համապատասխանության գնահատում պետք է կատարվի բոլոր շահառուների համար, հաճախորդների տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հավաքվի և մշակվի, սկզբունքները համարվում են համաշխարհային առումով կիրառելի:</p>
<p>2000թ. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա</p>	<p>2000թ. նոյեմբերի 15-ի իր թիվ 55/25 բանաձևով Գլխավոր ասամբլեան ընդունել է Միացյալ ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան իր լրացուցիչ արձանագրություններով, մասնավորապես. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, արգելման ու պատժի մասին արձանագրություն և Ցամաքով, օդով և ծովով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ արձանագրություն:</p>

<p>2001թ. Հարավային Աֆրիկայի զարգացման համայնքի (ՀԱԶՀ) Արձանագրություն ընդդեմ կոռուպցիայի</p>	<p>ՀԱԶՀ կոռուպցիայի դեմ արձանագրության նպատակն է նպաստել և ուժեղացնել յուրաքանչյուր պետության ներսում հանրային և մասնավոր ոլորտներում կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, պատժման և վերացման համար անհրաժեշտ մեխանիզմների զարգացումը: Արձանագրությունը միտված է հեշտացնել և կանոնակարգել անդամ պետությունների միջև համագործակցությունը կոռուպցիայի հետ կապված հարցերով և խթանել կոռուպցիայի վերաբերյալ քաղաքականությունների և ներպետական օրենսդրության զարգացումն ու ներդաշնակեցումը: Արձանագրությունը հստակորեն սահմանում է կոռուպցիոն գործողությունների կանխարգելիչ միջոցները, անդամ պետությունների իրավասությունը, ինչպես նաև էքստրադիցիան: Այս արձանագրության իրականացմանն ուղղված ինստիտուցիոնալ պայմանավորվածությունները ուրվագծված են սույն փաստաթղթում:</p>
--	--

<p>2002թ. Թրանսփրենսի ինթերնեշնլ-ի (Թ-Ի) Բիզնես ոլորտում բարեվարքության սկզբունքներ, որոնք կազմվել և ընդունվել են մեծ կազմակերպությունների կողմից</p>	<p>Կաշառակերությանը հակազդելու նպատակով ընդունված Բիզնես ոլորտում բարեվարքության սկզբունքները կազմակերպությունների համար ապահովում են համակողմանի հակակոռուպցիոն ծրագրերի զարգացման դաշտ: Չնայած մի շարք մեծ կազմակերպությունները չունեն հակակոռուպցիոն քաղաքականություն, որոշները արդյունավետ կերպով իրականացնում են այդ քաղաքականությունները: Թ-Ի խրախուսում է կազմակերպություններին Բիզնես ոլորտում բարեվարքության սկզբունքների օգտագործումը համարել մեկնակետ իրենց հակակոռուպցիոն ծրագրերի մշակման կամ գործող ծրագրերի կատարելագործման համար:</p>
<p>2002թ. Սարբեյնգ-Օքսլի ակտ</p>	<p>Օրենքն ուժի մեջ է մտել 2002թ. և ներկայացնում է կարևոր փոփոխություններ ֆինանսական պրակտիկայի և կորպորատիվ կառավարման կարգավորումներում: Ակտը կրում է Սենատոր Պոլ Սարբեյնգի և Ներկայացուցիչների պալատի անդամ Մայքլ Օքսլիի անունը, ովքեր հանդիսանում են դրա հեղինակները: Այն սահմանում է նաև դրա հետ</p>

	<p>համապատասխանություն ապահովելու որոշակի վերջնաժամկետներ: Սարբեյնգ-Օքսլի ակտը բաղկացած է 19 բաժիններից: Համապատասխանության ապահովման առումով հաճախ առավել կարևոր են համարվում 302, 401, 404, 409, 802 և 906 բաժինները:</p>
<p>2003թ. Գլխավոր դատավորների խմբի կողմից ներկայացված Դատական բարեվարքության չափանիշներ հաստատված Համաշխարհային դատարանի կողմից</p>	<p>Դատական վարքագծի կանոնների Բանգալորյան սկզբունքները հանդիսանում են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 2003թ. ապրիլին կայացած 59-րդ նստաշրջանում ՄԱԿ-ի Դատավորների և իրավաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցող Դաթո Պարամ Քումարասվամի կողմից ներկայացված զեկույցի հավելված: 2003թ. ապրիլի 29-ին Հանձնաժողովը միաձայն ընդունեց թիվ 2003/43 բանաձևը, որը, մեջբերելով Դատական վարքագծի կանոնների Բանգալորյան սկզբունքները, դրանք ներկայացրել է «անդամ պետությունների, ՄԱԿ-ի համապատասխան մարմինների և միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների ուշադրությանը»:</p>

<p>2003թ. Եվրոպայի խորհրդի միասնական կարգավորումներ քաղաքական կուսակցությունների և ընտարարշավների ֆինանսավորման ընթացքում կոռուպցիայի դեմ</p>	<p>Այս կարևոր իրավական փաստաթուղթը միջազգային մակարդակով իր տեսակի մեջ առաջինն է, որը համարվում է Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների ծավալուն բացատրական, վերլուծական և քաղաքական աշխատանքի կուլմինացիան, որն առաջընթացային ձևով տանում է դեպի ընդհանուր չափանիշների ընդունում քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման համար թափանցիկ համակարգի հիմնադրման համար՝ նպատակ ունենալով կանխարգելել կոռուպցիան:</p>
<p>2004թ. ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա</p>	<p>Կոնվենցիան ներկայացնում է նոր հիմնարար սկզբունք, ինչպես նաև պետությունների միջև ավելի ուժեղ համագործակցության դաշտ, նպատակ ունենալով կանխարգելել և բացահայտել կոռուպցիան և վերադարձնել եկամուտը: Կոռումպացված պաշտոնյաները հետագայում կգտնեն միջոցներ իրենց անօրինական եկամուտը թաքցնելու համար: Սա առանձանկի կարևոր հարց է զարգացող պետությունների համար, որտեղ կոռումպացված բարձրաստի-</p>

	<p>ճան պաշտոնյաները կողոպտել են ազգային հարստությունը և որտեղ նոր կառավարություններն իրենց հասարակությունները վերակառուցելու և վերականգնելու ռեսուրսների խիստ կարիք ունեն: Սույն Կոնվենցիայի նպատակներն են. ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը. բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը. գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը:</p>
<p>2005թ. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան մտել է ուժի մեջ</p>	<p>Այս կոնվենցիան առաջին հակակոռուպցիոն կոնվենցիան է, որն իրավամբ համարվում է համաշխարհային: Այն համակողմանի մոտեցում է ցուցաբերում կոռուպցիայի հիմնախնդրին, որպես կոռուպցիայի</p>

	արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի հիմք:
<p>2008թ. Կոռուպցիայի դեմ եվրոպական գործընկերները (ԿԳԵԳ) համաձայնության են եկել հիմնադրել աշխատանքային խումբ, Հակակոռուպցիոն լավագույն պրակտիկա և Ընդհանուր չափանիշներ</p>	<p>Ցանցը հիմնադրվել է Եվրոպական միությունում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման լիազորություններ ունեցող մարմինների միջև համագործակցության բարելավման, ինչպես նաև Եվրոպական ինստիտուտների և անդամ պետությունների միջև ավելի սերտ կապերի խթանման նպատակով: Այն հանդիսանում է արդյունավետ միջոցների և փորձի վերաբերյալ ԵՄ հետ կապված տեղեկատվության փոխանակման պլատֆորմ, վեր հանելով հնարավորությունները: Այն նպաստում է համագործակցությանը ընդհանուր ռազմավարություններ և բարձր պրոֆեսիոնալ չափանիշներ մշակելու հարցում:</p>
<p>2009թ. ՏՀԶԿ Հակակոռուպցիոն հանձնարարական</p>	<p>Հանձնարարականը ընդունվել է ՏՀԶԿ կողմից նպատակ ունենալով բարելավել Հակակոռուպցիոն կոնվենցիայի անդամ պետությունների՝ օտարերկրյա կաշառքի դրսևորումները կանխարգելելու, բացահայտելու և հետաքննելու կարողությունները և ներառում է ներպե-</p>

	<p>տական վերահսկության, էթիկայի և համապատասխանության լավագույն պրակտիկայի ուղեցույց:</p>
<p>2010թ. Մեծ Բրիտանիայի Կաշառքի մասին ակտ</p>	<p>Ակտն ընդունվել է 2010թ. ապրիլի 8-ին և ուժի մեջ է մտել 2011թ. հուլիսի 1-ին: Այն ունի հիմնարար նշանակություն բոլոր առևտրային կազմակերպությունների համար, որոնք գործում են կամ գրանցված են Մեծ Բրիտանիայում: Ակտը բարեփոխում է քրեական օրենսդրությունը՝ ապահովելով կաշառքի հետ կապված հանցագործությունների ավելի ժամանակակից և համակողմանի համակարգ, հնարավորություն տալով դատարաններին և դատախազներին ավելի արդյունավետ արձագանքել կաշառքին, անկախ դրա իրականացման վայրից: Այն լուրջ հետևանքներ ունեցող օրենսդրական ակտ է, որի որոշ դրույթներ ավելի համակողմանի են, քան դրանց համարժեք օրենքները ցանկացած վայրում, ներառյալ ԱՄՆ Օտարերկրյա կոռուպցիոն պրակտիկայի մասին ակտը (ՕԿՊԱ): Այն կիրառելի է ինչպես հանրային, այնպես էլ մաս-</p>

	<p>նավոր ոլորտում տեղի ունեցող կաշառքի նկատմամբ:</p>
<p>2013թ. Մեծ Բրիտանիայի Կասեցված հետապնդումների մասին համաձայնություններ (ԿՀՀ-ներ)</p>	<p>ԿՀՀ-ները ներկայացված են 2013թ. Հանցագործությունների և դատարանների մասին ակտի 17-րդ հավելվածում: ԿՀՀ համաձայն դատախազը մեղադրանք է ներկայացնում կազմակերպությանը քրեական հանցագործության համար, սակայն վարույթը ավտոմատ կերպով կասեցվում է: Կազմակերպությունը համաձայնվում է մի շարք պայմանների, ինչպիսիք են ֆինանսական տուգանքի վճարումը, փոխհատուցման վճարումը և հետագայում անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելիս համագործակցությունը: Եթե կազմակերպությունը չի կատարում պայմանները, քրեական հետապնդման վարույթը կարող է վերսկսվել: ԿՀՀ-ները կարող են օգտագործվել խարդախության, կաշառքի և այլ տնտեսական հանցագործությունների դեպքում: Դրանք կիրառելի են կազմակերպությունների, սակայն ոչ ֆիզիկական անձանց նկատմամբ: ԿՀՀ-ը հարմար է այն դեպքում, երբ քրեական</p>

	<p>հետապնդման իրականացումը լավագույնս չի ծառայում հան- րային շահին: ԿՀՀ կնքումը պետք է լինի թափանցիկ հան- րային իրադարձություն, որի ըն- թացքը պետք է վերահսկվի դատավորի կողմից:</p>
--	---

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Միջազգային կազմակերպություններ և
Օրենսդրական Հիմնական Ակտեր*

Integrity Glossary

International Organisations and Key Legislation

ԷԴԻՒՄ ՊՐԻՆՏ

Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT

12 Toumanyanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

Published by Integrity Action